Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

10385

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

# ԻՆՉՊԵՍ ԱՆՑԿԱՑՆԵԼ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԱՆԴԱՄԱՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

1. ՀԱՄ. ԼԿՅԵՄ ԿԿ ՎՈՐՈՇՈՒՄԸ
2. ՀԱՄ. ԼԿՅԵՄ ԿԿ ՆԱՄԱԿԸ
3. ԸՆԿ. ԿՈՍԱՐԵՎԻ ՃԱՌԸ
4. ՀԱՄ. ԼԿՅԵՄ ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ
5. ՀԼԿՅԵՄ ԿԿ ՎՈՐՈՇՈՒՄԸ
6. ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԱՆԴԱՄԱՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

3КСМ3
Ի-62

1932 ԵՐԵՎԱՆ

10385

*Պետհրատի տպարան*

*Պատվեր* 808

*Տիր.* 2000

26 APR 2013
ի-62
24 SEP 2006
09 DEC 2009
1007
33670

## ՀԱՄԼԿՅԵՄ ԿԿ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԱՆԴԱՄԱՏՈՄՍԵՐԻ ՅԵՎ ԹԵԿՆԱԾՎԱԿԱՆ ԿԱՐՏԻՉԿԱՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

1. ՀամԼԿՅԵՄ անդամատոմսերի և թեկնածվական կարտիչկաների փոխանակությունն սկսել **1932** թ. փետրվարի **5**-ից ՀամԼԿՅԵՄ Մոսկվայի, Լենինգրադի և Կենտրոնական Սևահողային մարզային կազմակերպություններում: Մինչև մարտի **5**-ը վերջացնել տոմսերի փոխանակությունն այդ կազմակերպություններում:

2. **1932** թ. մարտի **15**-ից անցնել ՀամԼԿՅԵՄ անդամատոմսերի և թեկնածվական կարտիչկաների փոխանակմանը կոմյերիտմիության բոլոր մնացած կազմակերպություններում, վերջացնելով ՀամԼԿՅԵՄ անդամատոմսերի վերջնական փոխանակությունն ամբողջ Միությունում **1932** թ. հունիսի **5**-ին:

3. *Հանձնարարել Մոսկվայի, Լենինգրադի ՀամԼԿՅԵՄ մարզկոմներին և ՀամԼԿՅԵՄ ԿՍՄ (Կենտր. Սևահող. մարզ) մարզկոմին հրավիրել կոմյերիտական ակտիվի լայն ընդհանուր քաղաքային ժողովներ՝ որակարգ ունենալով կոմյերիտական անդամատոմսի փոխանակության հարցը:*

4. *Հանձնարարել բոլոր յերկրկոմներին, մարզկոմներին, ազգային հանրապետությունների ԿԿ և կոմյերիտմիության բոլոր շրջկոմներին* քննարկելու կոմյերիտմիության բոլոր բջիջներում և կազմակերպություններում անդամատոմսի փոխանակության հարցը, հրահանգելով կոմյերիտական վողջ ակտիվին և կոմյերիտականներին տոմսի փոխանակության անցկացման կարգի մասին:

5. *Առաջարկել ՀամԼԿՅԵՄ մարզային, յերկրային և հանրապետական կազմակերպություններին կազմակերպության ներսում սահմանել* անդամատոմսերի փոխանակության հերթականություն ըստ ռայոնների, իսկ ռայոններում—անդա-

21 SEP 2005

մատումների փոխանակության հերթականություն ըստ առանձին ՀամԼԿՑԵՄ բջիջների խմբակի, յելնելով փոխանակության այն ժամկետներից, վոր սահմանված են ՀամԼԿՑԵՄ ԿԿ տվյալ վորոշմամբ:

6. Գործուղել յուրաքանչյուր մարզային, յերկրային Համ. ԼԿՑԵՄ կազմակերպության ՀամԼԿՑԵՄ ԿԿ մեկական լիազոր օգնելու անդամատոմսերի փոխանակությունն անցկացնելու համար:

Առաջարկել մարզկոմներին, յերկրկոմներին և ազգային հանրապետությունների ԿՑԵՄ ԿԿ իրենց հերթին ՀամԼԿՑԵՄ ռայոնական կազմակերպությունները գործուղել հատուկ լիազորներ կազմակերպություններին օգնելու անդամատոմսերի փոխանակությունն անցկացնելու համար:

7. Կազմակերպություններում անդամատոմսերի փոխանակության անցկացման ամբողջ օպերատիվ ղեկավարությունը դնել այն հատուկ յեռյակների-հնգյակների վրա, վորոնք ստեղծվում են մարզկոմներին, յերկրկոմներին, ազգային հանրապետությունների ԿՑԵՄ ԿԿ, քաղաքային և գյուղական շրջկոմներին և ԼԿՑԵՄ բջիջներին կից:

Յեռյակների-հնգյակների կազմի մեջ, վորպես կանոն, պետք է մտնի կուսկազմակերպությունների ներկայացուցիչը, մարզայինի մեջ—մարզկոմի ներկայացուցիչը և ՀամԿ(բ)Կ մարզային ՎՀ ներկայացուցիչը. շրջանայինի մեջ— շրջկոմի ներկայացուցիչը և ՀամԿ (բ) Կ ՇՎՀ և բջջայինի մեջ— կուսբջջի ներկայացուցիչը:

Յուրաքանչյուր յեռյակ-հնգյակ պարտավոր է տասն օրը մի անգամ տեղեկացնել անդամատոմսերի փոխանակության ընթացքի մասին. բջջայինը— ԿՑԵՄ բջջի բյուրոն, շրջանայինը— ԿՑԵՄ ՇԿ բյուրոն, մարզայինը— ԿՑԵՄ մարզկոմի բյուրոն:

8. Սահմանել վորպես կանոն, վոր մարզկոմների, յերկրկոմների և ազգային հանրապետությունների ԿՑԵՄ ԿԿ յեռյակների-հնգյակների կազմը հաստատում է ՀամԼԿՑԵՄ ԿԿ, ռայկոմների յեռյակների-հնգյակների կազմը հաստատում է մարզկոմը, յերկրկոմը և ազգային հանրապետությունների ԿՑԵՄ ԿԿ, բջիջների յեռյակի կազմը հաստատում է ՀամԼԿՑԵՄ ռայկոմը:

9. ԿԿ-ին կից կոմյերիտական անդամատոմսերի փոխանակության կենտրոնական հանձնաժողովի կազմը հաստա-



տել ընկ. ընկ. Սալտանովին նախագահ, Լուկյանովին, Գե-րովիչին, Բալաշեվին, Գրոմովին, Ցվանկինին և Համ Կ (բ) Կ ներկայացուցչին:

Հանձնարարել կոմիսիային՝

ա) անդամատոմսերի փոխանակության անցկացման հետ կապված ամբողջ աշխատանքի սիստեմատիկ ղեկավարությունը.

բ) 1932 թ. հունվարի 25-ին ներկայացնել ԿԿ քարտուղարության ՀամԼԿՑԵՄ բոլոր մարզային, յերկրային և հանրապետական կոմիտեների յեռյակների-հնգյակների և նրանց նախագահների կազմը ի հաստատություն.

գ) սահմանել անդամատոմսերի փոխանակության հանրագումարների վերջնական ամփոփումների կարգը և ժամկետները ըստ յուրաքանչյուր մարզային, յերկրային և հանրապետական կազմակերպության:

10. Անդամատոմսերի փոխանակության համար Համ. ԼԿՑԵՄ ԿԿ լիազոր հաստատել՝ Մոսկվայի մարզում— ընկ. Լուկյանովին, Լենինգրադի մարզում— ընկ. Գուսեվին, ԿՍՄ— ընկ. Տատարնիկովին:

Հաստատել առաջին հերթին կազմակերպության յեռյակների հետևյալ կազմը.

1) Մոսկվա— ընկ. ընկ. Լուկյանով—նախագահ, Իվուշկին, Գերասիմով, Բրավին և Վոլկով:

2. Լենինգրադ— ընկ. ընկ. Գուսեվ— նախագահ, Մարտյանով, Շպիլլեր, լրացնելով յեռյակի կազմը Համ. Կ (բ) Կ վերահսկիչ հանձնաժողովի ներկայացուցիչներով:

3. ԿՍՄ—ընկ. ընկ. Ռուդիխ—նախագահ, Յեգորով և Պետուխով:

11. Սահմանել կոմյերիտական անդամատոմսերի փոխանակության ժամանակ վճարի գանձման հետևյալ կարգը.

ա) բանվորներից, ծառայողներից, տնայնագործներից, Բան.-գյուղ. Կար. Բան. պետկազմից (начальствующий состав) և բարձրագույն դպրոցի ուսանողներից, վորոնք ունեն մինչև 60 ռուբլի աշխատավարձ ( заработок ), գանձել 25 կոպ., 60-ից մինչև 110 ռուբլի— 50 կոպեկ, 111—175 ռուբլի—75 կոպ. և 176 ռուբլուց բարձր— 1 ռուբլի.

բ) ՖԳՈՒՍ-ի աշակերտներից— 25 կոպ.

գ) Գյուղացիներից— 25 կոպ.

դ) Ստորին դպրոցի աշակերտներից—10 կոպ.:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— 1. Բարձրագույն դպրոցի

այն ուսանողներից, վորոնք չունեն թոշակ և ինքնուրույն աշխատանք, անդամատոմսի համար գանձել 25 կոպ.:

2. Մանկատների սաներին և այն անձանց, վորոնք ֆիզիկական աշխատանքի ընդունակ են (կենսաթոշակ ստացողները), անդամատոմսերի վճարից ազատել:

3. Կարմիր բանակայիններին անդամատոմսերի վճարից ազատել:

12. *Այն բոլոր գումարները, որ ստացվել են անդամատոմսերի համար ազգ. կկ, յերկրային և մարզային կազմակերպությունների կողմից, փոխադրել ՀամԿԿ (բ) ԿԿ միասնական կուսբյուջեն նույն կարգով, ինչպես և անդամակցական մուծումները: Ազգային ԿԿ, յերկրային և մարզային կոմիտեներին տրված անդամատոմսերի հաշվարկումը կատարել հետևյալ ձևով.*

*ա*) ՀամԼԿՅԵՄ ԿԿ ՀամԿ (բ) ԿԿ-ի ֆինմասին ամսական տեղեկություններ է ներկայացնում կազմակերպություններին ուղարկված տոմսերի քանակի մասին, վորոնց (տոմսերի) հիման վրա գումարը հանվում է կազմակերպությունների հասանելիք վարկերից այն հաշվով, վորը հաստատված է ԿՅԵՄ ԿԿ-ի կողմից.

*բ*) Ստուգման ժամանակ ամիսը մի անգամ և մնացած ժամանակ տարին յերկու անգամ (առ 1-ն հուլիսի և առ 1-ն հունվարի) ազգային ԿԿ, յերկրկոմները և մարզկոմները տրված տոմսերի համար ՀամԼԿՅԵՄ ԿԿ-ին ներկայացնում են ամփոփ տեղեկագիր, մատնանշելով նրանց համար ստացած գումարները և այդ տեղեկագրի հիման վրա լիակատար հաշվարկում է կատարվում, հաշվելով մուտքի տարբերությունը որիենտիր ընդունված գումարի հանդեպ դեպի այս կամ այն կողմը.

*գ*) այն կազմակերպությունները, վորոնք դոտացիա չեն ստանում միասնական կուսբյուջեից, նույնպես ներկայացնում են մատնանշած ամփոփ տեղեկագրերը և անդամատոմսերի արժեքը որիենտիր գնահատումով մտցվում են կուսբյուջեի ընդհանուր հաշվետվության մեջ, հաշվելով հետագայում տարբերությունը փաստացի գանձածի հանդեպ: Հավաքված միջոցները պետք է փոխադրվեն ՀամԿ(բ)Կ ԿԿ-ին ըստ կուսբյուջեի հաշվետվության հասանելիք միջոցների հետ միասին:

13. *Զինվորական մասերում անդամատոմսերի փոխանակության մասին ԿԿ և Պուր-ի (Ռազմահեղափոխական Խորհրդին կից քաղաքական վարչություն) միասնական նամակը հաստատել:*



14. Համարել անհրաժեշտ, վոր յուրաքանչյուր կոմյերիտական անդամատոմսի փոխանակության ժամանակ լրիվ մարի իր անդամակցական վճարի պարտքը:

---

# ՊԱՏՐԱՍՏՎԵՑԵՔ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ԿՈՄՍՈՄՈԼԻ ԱՆԴԱՄԱՏՈՄՍԵՐԸ

ՀամԼԿՅԵՄ բոլոր կազմակերպություններին, բոլոր կոմյերիտականներին.

*ՀամԼԿՅԵՄ ԿԿ 1932 թ. փետրվարի 5-ից մինչև հունիսի 5-ը անցկացնում է կոմյերիտական հին անդամատոմսերի փոխանակություն և տալիս է նորերը:*

*Այս ձեռնարկումը խոշոր քաղաքական կարևորություն ունի: Կոմսոմոլի անդամատոմսերի փոխանակությունը պետք է նպաստի ՀամԼԿՅԵՄ անդամների էլ ավելի մեծ մոբիլիզացիային կուսակցության գլխավոր գծի անցկացման համար, ՀամԼԿՅԵՄ շարքերի դասակարգային մարտունակության հետագա բարձրացման համար, զանազան օպորտունիստական թեքումների դեմ պայքարն ուժեղացնելու համար:*

*Կոմսոմոլի անդամատոմսի փոխանակությունը պետք է քաղաքականապես էլ ավելի շատ ակտիվացնի կոմսոմոլի բոլոր կազմակերպություններին և կոմյերիտականներին կուսակցությանն օգնելու տնտեսական շինարարության կոնկրետ խնդիրների, 1932 թ. կոնտրոլ թվերի կատարման համար:*

*Անհրաժեշտ է կոմյերիտականների ուշադրությունն էլ ավելի շատ բևեռել արդֆինպլանի կատարման վրա, ՀամԼԿՅԵՄ անդամներին սոցիալիստական մրցության և հարվածայնության մեջ էլ ավելի ներգրավելու վրա, ներգրավելու պլանային-օպերատիվ խմբակի աշխատանքի մեջ, տեխնիկայի ուսումնասիրության, պրոգուլների, խոտանի (брак) դեմ պայքարելու, արտադրանքի որակի բարելավման համար:*



*Գյուղի կոմյերիտական կազմակերպությունները տոմսի փոխանակության անցկացումը պետք է կապեն կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրացման մեջ իրենց մասնակցության բարձրացման հետ, կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների և մենատնտեսների պարտավորությունների կատարման հետ պրոլետարական պետության հանդեպ, կուլակության և նրա ագենտուրայի դեմ պայքարի հետագա ուժեղացման հետ:*

*ՀամԼԿՅԵՄ ԿԿ առաջարկում է կոմսոմոլի բոլոր կազմակերպություններին անդամատոմսի փոխանակությունն օգտագործել կոմյերիտականների մարքս-լենինյան դաստիարակության բարձրացման համար:* Չպետք է լինի քաղաքի և գյուղի վոչ մի կոմյերիտական, վորը չուսումնասիրի մարքս-լենինյան հեղափոխական թեորիան: *Չպետք է լինի վոչ մի կոմյերիտական, վորն ակտիվ չմասնակցի կոմսոմոլի առօրյա աշխատանքին:*

*Կոմսոմոլի տոմսի փոխանակությունը պետք է զուգակցել անկարգապահ տարրերի դեմ պայքարի ուժեղացման հետ, մասնավորապես հատուկ ուշադրություն պետք է դարձնել անդամավճարների գանձման վրա: Պետք է անխնա պայքար հայտարարել անդամավճարներ չվճարողներին:* Անդամավճարները ժամանակին վճարելը հանդիսանում է յուրաքանչյուր կոմյերիտականի ամենաառաջին պարտականությունը և հանդիսանում է կոմյերիտմիությանը պատկանելու տարրական հատկանիշը: Նա, ով չի վճարում անդամավճարը, նա չի ամրացնում իր կազմակերպությունը, նա արժանի չէ մնալու ՀամԼԿՅԵՄ շարքերում: *Անհրաժեշտ է աշխատել, վոր յուրաքանչյուր կոմյերիտական վճարի անդամակցական վճարի պարտքը:*

*ՀամԼԿՅԵՄ ԿԿ նախազգուշացնում է բոլոր կազմակերպություններին* անդամատոմսի փոխանակությունը կազմակերպության գոման վերածելու փորձերից:

*Կոմսոմոլի տոմսի փոխանակությունը միության շարքերի զտում չէ և հասարակ տեխնիկական ձեռնարկում չէ:*

*Անհրաժեշտ է ուշադիր, զգայուն մոտեցում դեպի յուրաքանչյուր կոմյերիտական առանձին, պետք է ջանալ, վորպեսզի վոչ մի կոմյերիտական միությունից չվտարվի առանց բավականաչափ հիմունքների («ժողովներ չհաճախելու»,*

«անբավարար ակտիվություն», «մեծահասակ» անվան տակ և այլն)։ Միևնույն ժամանակ կազմակերպությունից պետք է կտրել— հեռացնել խորթ անձնավորություններին, վորոնք խցկվել են ՀամԼԿՅԵՄ մեջ։

Յուրաքանչյուր կոմյերիտական պետք է ժամանակին փոխանակի իր անդամատոմսը։

*Անցկացվող փոխանակության քաղաքական կարևորությունը և նշանակությունը, նրա անցկացնելու բարդությունը 5 միլիոնանոց միության պայմաններում*, յուրաքանչյուր խմբակից, ողակից, բջջից, կոմիտեյից պահանջում են ուշադիր և լուրջ պարտականություն դեպի փոխանակությունը։

Բջիջը պետք է անցկացնի հետևյալը.

1. *Յուրաքանչյուր բջիջ իր կողմից զատում է յեռյակ, վորը հաստատվում է շրջկոմի կողմից։ Բջջի բյուրոն հրավիրում է բոլոր կոմյերիտականների ընդհանուր ժողով, վորտեղ փոխանակության յեռյակը զեկուցում է փոխանակության նշանակության և նրա անցկացման տեխնիկայի մասին։*

*Բջջի բյուրոն յեռյակի հետ միասին վաղօրոք կազմում է բոլոր այն կոմյերիտականների ցուցակը, վորոնք մտնում են բջջի մեջ, կարդում է այդ անվանացուցակը բջջի ժողովում, վորտեղ յուրաքանչյուր ներկայեղող կարող է առարկել այս կամ այն կոմյերիտականի նկատմամբ, և քննարկվում է կոմյերիտմիության մեջ թողնելու հնարավորությունը այն ընկերոջ, վորի նկատմամբ յեղել է առարկություն։*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Կոմյերիտականների մեջ անդամատոմսի փոխանակության անցկացման համար մըտցըվում են նմանապես այն կոմյերիտականները, վորոնք գտնվում են ժամանակավոր հաշվառության մեջ։

3. *Շրջանային յեռյակի ցուցումով բջջային յեռյակը սահմանում է փոխանակության անցկացման ճիշտ ժամկետ յուրաքանչյուր խմբակի, ողակի, յելնելով արտադրության պայմաններից, և հաղորդում է այս մասին բջջի ժողովում։ Բացի այդ, այդ ժամկետների մասին պետք է հայտնված լինի յուրաքանչյուր կոմյերիտականի հայտարարության, պլակատների և խմբակային մարմինների անհատական շրջագայության և բջջի բյուրոյի անդամների միջոցով։*

4. *Տոմսի փոխանակության անցկացման մոմենտին բջիջը պետք է լիակատար կարգի բերի կազմակերպության ան-*



դամների ընդունելության և վտարման վերաբերյալ իր գործերը, ձգտելով այն բանին, վորպեսզի բջջի վոչ մի անդամ չգտնվի չպարզված դրության մեջ։

5. *Նոր տոմսերի հանձնումը կատարվում է ցեխային և փոխվող բջիջների կոմյերիտական ընդհանուր ժողովներում, լայնորեն ներգրավելով անկուսակցական յերիտասարդության։*

*Անհրաժեշտ է տոմսերի հանձնումը կազմակերպել այնպես, վորպեսզի նոր տոմս ստացող կոմյերիտականն իր վրա նոր պարտավորություններ վերցնի իր արտադրական և հասարակական աշխատանքի և ուսման վերաբերյալ։*

*Դրա համար հանձնարարվում է տոմսերի հանձնման համար ներգրավել կադրային կուսանդամ-բանվորներին, վորոնք տոմսը կոմյերիտականին հանձնելիս նրա առաջ դնեն մի շարք պահանջներ։*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այն կոմյերիտականները, վորոնք արտադրության պայմանների պատճառով չեն կարողանում տոմսն ստանալ բջջի ժողովում (գտնվում է գործուղման մեջ, աշխատում է, հիվանդ է) ստանում է այն 10 որվա ընթացքում բջջի բյուրոյում, իսկ այս ժամկետն անցնելուց հետո ԿՅԵՄ շրջկոմում։

*Կոմյերիտականը, ստանալով տոմսը, ստորագրում է հատուկ բաշխման ցուցակի մեջ և վճարում է տոմսի համար ԿԿ հրահանգով սահմանված վճարը։*

6. *Այն կոմյերիտականների մասին, վորոնց նկատմամբ փոխանակության պրոցեսում կասկած է առաջանում տեղեկությունների ճշտության վերաբերյալ, վոր արձանագրված է անձնական քարտի մեջ և հին անդամատոմսի մեջ (կոմյերիտական ստաժ, սոցիալական ծագում և այլն), յեռյակը և բջջի բյուրոն պետք է հաղորդեն կոնֆլիկտային հանձնաժողովին, վորը պարտավոր է վոչ ուշ քան 5 որվա ընթացքում նայել յուրաքանչյուր գործ։*

7. *Տոմսի փոխանակության վերաբերյալ բոլոր նյութերը և հրահանգները պետք է մշակվեն բջիջների ժողովներում խմբակային մարմինների բոլոր խորհրդակցություններում, բոլոր ողակային, ագրեգատային, փոխվող, ցեխային բջիջների բյուրոներում, կոմիտեների բյուրոներում և բջիջներում, մինչև մարզկոմները և յերկրկոմները այնպես, վոր-*

պետք է յուրաքանչյուր կոմյերիտական և ևս առավել միության ակտիվ աշխատավորն իմանա ոչ միայն խնդիրները, այլ և տոմսի փոխանակության անցկացման ամբողջ տեխնիկան:

ՀԱՄԼԿՑԵՄ ԿԿ



## ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱ ՅԵ

Մեր միքանի ղեկավար աշխատողների մեջ գոյություն ունի այն կարծիքը, որ կոմյերիտական տոմսի փոխանակում կատարելը հասարակ և զուտ տեխնիկական գործ է: Այդ աշխատակիցները չեն զգում այդ ձեռնարկման ամբողջ նշանակությունը, թերագնահատում են այդ գործի ամբողջ կարևորությունը:

Կոմյերիտական տոմսերի փոխանակման վերաբերյալ այդպիսի թեթև վերաբերմունք ցույց տալու փաստերի մենք արդեն հանդիպել ենք նախապատրաստական աշխատանքներում: Անհրաժեշտ է խուսափել բոլոր այն հնարավոր սխալներից, որոնք հանդես կգան տոմսերի փոխանակման ժամանակ, կանխել նրանց և համենայն դեպս ձգտել, որպեսզի ինչքան կարելի յե այդ սխալները քիչ լինեն — ահա թե ինչի պետք է ձգտի միության ամեն մի ակտիվ աշխատող, ամեն մի կոմյերիտական:

## ԱՆԴԱՄԱՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՑՆԵԼ ՄԻՆՉԵՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆԻ

Ի՞նչ է նշանակում անդամատոմսերի փոխանակությունը հասցնել այն կազմակերպության մեջ, որն ունի 5 ½ միլիոն անդամ. այդ նշանակում է կոմյերիտական անդամատոմսի փոխանակության գաղափարը հասցնել մինչև յուրաքանչյուր կոմյերիտականի ոչ միայն նրա ամբողջ քաղաքական նշանակությամբ, ոչ միայն այդ հարցը դնել ամբողջ կազմակերպության առաջ «ընդհանրապես», այլ պարզեցված ձեմակերպության

վով հասցնել մինչև 5½ միլիոն կոմյերիտականներին այդ բարդ խոշորագույն քաղաքական ձեռնարկման մանրամասնությունները: Պարզ է, վոր այստեղ չի կարելի ոճիքը թափ տալ և բավականանալ անդամատոմս փոխելով «ընդհանրապես»: Պետք է փոխանակել 5½ միլիոնանոց կազմակերպության թվից յուրաքանչյուր արժանի կոմյերիտականի անդամատոմսը, այսինքն պետք է գտնել բանալին դեպի յուրաքանչյուր առանձին կոմյերիտական, վորը գտնվում է մեր կազմակերպության մեջ:

Այդ գործը շատ և շատ բարդ է: Պետք է աշխատել, վորպեսզի ամեն մի կոմյերիտական անդամության տոմսի առաջիկա փոխանակման ժամանակ իմանա, թե յերբ պետք է ինքը անձամբ փոխի իր տոմսը, վոր օրը, վոր ժամին և վորտեղ:

Յեթե մենք այդ ձեռնարկումը չհասցնենք ամեն մի կոմյերիտականի, ապա նրանցից շատ շատերը չեն իմանա, թե ինչպես պետք է փոխեն իրենց տոմսը, վորտեղ, յերբ, իսկ այդ բանը կհանգեցնի նրան, վոր հարյուրավոր և նույնիսկ հազարավոր կոմյերիտականներ չեն փոխանակի իրենց տոմսը և կարող են այդ պատճառով էլ դուրս մնալ միությունից:

Այդ կարող է պատահել վոչ թե վորևէ մեկի չար դիտավորությամբ, այլև միայն այն թեթև և մակերեսային վերաբերմունքի պատճառով, վոր ցույց կտան այդ գործում ղեկավարը կամ միության ակտիվ աշխատողը:

Այդ դեպքում պետք է հասկանալ կոմյերիտականի ամբողջ վողբերգականությունը, յերբ նա ուզում է փոխանակել տոմսը, բայց չգիտի վորտեղ, յերբ և ինչպես այդ անի: Իսկ չէ՞ վոր այսպիսի ընկերները գործի վատ կազմակերպման դեպքում կարող են շատ լինել և նրանից հետո վորպեսզի դրությունից դուրս գան, պետք է վորակվեն վորպես «մեխանիկորեն դուրս մնացողներ» կամ «մեռած հոգիներ»:

Իսկ չէ՞ վոր այդ ընկերներից շատերն այդ պատճառով միությունից դուրս ընկածները կարող են լինեն կոմունիստներ, կոմյերիտականներ:

Նա, ով մեխանիկական մոտեցում կունենա տոմսերի փոխանակման գործին, նա հանցագործություն կկատարի կուսակցության և կոմյերիտմիության առջև:

Վորևէ բյալլագյող, վոր չի մտածել սահմանելու օրը,



ժամը, անդամատոմսի փոխանակության տեղը, այդ գործը վատ կազմակերպելով կարող է հենց դրանով կազմակերպությունից պոկել հարյուրավոր մարդկանց, հատկապես գյուղում և ազգային կազմակերպություններում: Սահմանելով կոմսոմոլի անդամատոմսերի փոխանակության ժամանակը և տեղը, պետք է հաշվի առնել յերիտասարդության առանձին խմբակների առանձնահատկությունները: Չէ՞ վոր մեզ մոտ քիչ չեն գտնվի այնպիսի կոմյերիտականներ, վորոնց համար այս կամ այն օրը, վոր նշանակված է տոմսի փոխանակության համար, չեն հարմարվի մի շարք պատճառներով: Կամ նա աշխատում է հերթափոխության մեջ, կամ թե արձակուրդումն է գտնվում և գնացել է քաղաքից գյուղ ծնողների մոտ, իսկ գուցե և հիվանդ է տվյալ ժամանակում: Բազմամիլիոն կոմսոմոլի մեջ այդպիսի դեպքեր, իհարկե, շատ կգտնվեն: Այս բոլորը պետք է նկատի ունենալ. մասսաներին պետք է մոտենալ վոչ թե ընդհանրապես, այլ իմանալ՝ վորտեղ է գտնվում առանձին կոմյերիտականը տվյալ մոմենտում, իսկ նրան յերբ ավելի լավ ու հարմար է փոխանակել կոմսոմոլի տոմսը, ինչպիսի ժամկետներ սահմանել նրա համար:

Մենք կրկին անգամ ընդգծում ենք, վոր հասցնել տոմսի փոխանակությունը մինչ յուրաքանչյուր կոմյերիտականի, վոչ ընդհանրապես, այլ ասել յուրաքանչյուր կոմյերիտականի; վորպեսզի նա տոմսը փոխանակի այս-ինչ օրը, այս-ինչ ժամին և այս-ինչ տեղում, և այդ ասել 5½ միլիոն անդամներին, յուրաքանչյուրին առանձին, շատ բարդ գործ է, հսկայական ուշադրություն, լարվածություն է պահանջում: Անդամատոմսի անցկացվող փոխանակությունը միութենական ղեկավարության քննությունն է:

## ՏՈՄՍԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ ՊԵՏՔ Ե ՑԵՆԹԱՐԿԵԼ ՄԵՐ ՇԱՐՔԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԾԻ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՈՒԺԵՂԱՑՄԱՆԸ

Ընդգծում ենք— Միության ամեն մի ակտիվ աշխատող պետք է հասկանա, վոր կոմյերիտական տոմսի փոխանակումը— դա տեխնիկական ձեռնարկում չէ, այլ ամենից առաջ հսկայական քաղաքական կարևորություն ունեցող մի ձեռնարկումն է:

*Տոմսի փոխանակության տեխնիկայի հարցը թեկուզ և կարևոր է, սակայն կրում է յերկրորդական, լրացուցիչ բնույթ: Իսկ տոմսի փոխանակության ձեռնարկման կենտրոնական բովանդակությունը կայանում է նրանում, վոր նա պետք է մեզ քաղաքականապես եվ ավելի ամրացնի: Այդ ձեռնարկումը հարկավոր է օգտագործել մեր միության շարքերն առավելագույն չափով ավելի խիտ հավաքելու կուսակցության գծի կոնկրետ անցկացման շուրջը, տվյալ մարզում, շրջանում, բջիջում, ցեխում, խմբակում, ագրեգատում, գործարանում ամբողջովին, կոլտնտեսության մեջ և այլն: Պետք է կոմյերիտական տոմսի փոխանակումը օգտագործել այնպես, վորպեսզի եվ ավելի բարձրացնել սոցիալիստական շինարարության մեջ ամեն մի կոմյերիտականի քաղաքական ակտիվությունը: Արդֆինպլանի բոլոր քանակական և վորակական ցուցանիշների կատարումը, ինքնարժեքի իջեցումը, տեխնիկայի ուսումնասիրումը, հարվածայնության ավելի բարձր աստիճանի դնելը, գործարանային և ցեխային պլանավորումը, կոլտնտեսության կազմակերպական, տնտեսական ամրացումը, պլյուս այդ բոլորին հեղափոխական տեսության տիրապետումը — ահա թե ինչ է մեզանից պահանջվում:*

*Հարկավոր է ավելի լայն ու ավելի խորը ծավալել մասսայական-քաղաքական աշխատանքը: Յեվ յեթե մեզ կհաջողվի այդ գործը կազմակերպել, ապա մենք համոզված ենք, վոր կոմյերիտական տոմսի փոխանակումից հետո մեր միությունը կբարձրանա ավելի բարձր աստիճանի վրա:*

*Մենք մեր 5½ միլիոն կազմակերպությունը, յուրաքանչյուր անդամի եվ ավելի յենք ակտիվացնում: Իսկ դուք գիտեք՝ ինչ է նշանակում պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ շարժման մեջ դնել մասսաներին, ևս առավել յերիտասարդական մասսաներին, վորոնք նվիրված են կուսակցությանը:*

*Բարձրանում է ստեղծագործության և ակտիվության այնպիսի ալիք, վորի մասին մենք ուղղակի եվ չենք մտածում:*

Կազմակերպված և խորը մտածված անցկացնելով 5½ միլիոն կոմյերիտականների անդամատոմսերի փոխանակությունը, դրա վրա բարձրացնելով միության հասարակական-քաղաքական ակտիվությունը, մենք կգտնենք այդ ակտիվության կոնկրետ արտահայտության լավագույն ուղիները սոցիալիստական շինարարության առանձին բնագավառներում: Դրա հետևանքով մեզ մոտ կբարձրանա ակտիվի հասունությունը և կոմսոմոլի աշխատանքն ավելի լավ կծավալվի բոլոր գծերով՝ տնտեսական, խորհրդային, արտադրական և այլն: Մենք պետք է յուրաքանչյուր կոմյերիտականին ավելի մեծ լից ( зарядка ) տանք հետագա աշխատանքների համար:



*Ամբողջ միությունն ամբողջությամբ, նրա առանձին օղակները, անհատ կոմյերիտականները պետք է ձգտեն շատ հասկանալու մեր կուսակցության գիծը, հասկանալու այն, թե ինչպես պետք է անցկացվի այդ գիծն առանձին, կոնկրետ պայմաններում:*

Պետք է կուսակցության գիծը վոչ միայն հասկանալ, այլ կարողանալ այն քաղաքականապես իրագործել, *յելնելով յերկրի, մարզի, շրջանի, գործարանի, կոլտնտեսության առանձնահատկություններից: Մենք պետք է ձգտենք, վորպեսզի յուրաքանչյուր կոմյերիտական անդամատոմսը փոխանակելու ժամանակ իրեն զինի գիտությամբ, թե ինչպես նրա կոնկրետ պայմաններում կուսակցության ընդհանուր գիծը պետք է գտնի իր կոնկրետ արտահայտությունը:* Բարձրացնել միության դասակարգային մարտունակությունը, *դնել միության գաղափարական-քաղաքական մակարդակ* մեծ բարձրության վրա — ահա կոմյերիտական տոմսի փոխանակման քաղաքական կողմը:

*Ամեն մի կոմյերիտական պետք է իր անձնական շահերը և ցանկությունները յենթարկի կազմակերպության շահերին: Այդ կապակցությամբ այստեղ պետք է կանգ առնել անդամավճարների հարցի վրա: Անդամավճարների, ինչպես նաև այդ մուծումների պարտավորության հարցը հանդիսանում է վոչ միայն զուտ ֆինանսական մի հարց, այլ գլխավորապես դա քաղաքական հարց է:*

*Անդամավճարների մուծման փաստը պետք է բարձրացնի կոմյերիտականի մոտ նրա կազմակերպության պատկանելու գիտակցումը: Անդամավճարները ժամանակին մուծելու հոգատարությունը մեծ չափով օժանդակում է դիսցիպլինայի բարձրացմանը. իսկ դիսցիպլինայի հասկացողությունը մեզ մոտ տեղերում, հատկապես բջիջներում, անբավարար է: Վորպես կանոն առանձնացնում են անդամավճար գանձողին, չրա*

ցատրելով նրան անդամավճարների հավաքման քաղաքականությունը, այլ միայն տալիս են—դնա հավաքիր: Բայց հասկացեք, մենք չենք կարող բյուրոկրատորեն դատապարտել կազմակերպությունը, յեթե այդ կազմակերպության անդամները չգիտեն անդամավճարները ժամանակին մուծելու նշանակությունն ու անհրաժեշտությունը: Անդամավճարի ժամանակին մուծումը հանդիսանում է ամեն մի կոմյերիտականի ամենաառաջին պարտականությունը, հանդիսանում է կոմյերիտմիությանը պատկանելու ելեմենտար հատկանիշը. նա, ով չի վճարում անդամավճարը, չի ամրացնում իր կազմակերպությունը, նա արժանի չէ Համ.ԼԿՅԵՄ շարքերում լինելու: Այդ տեսակետից անցնենք այն յերկարաձգումներին, վորոնք տեղի յեն ունենում անդամավճարների մուծման հարցում: Պարտապաններ մեզ մոտ շատ կան, իսկ նրանք տարբեր բնույթի յեն: Վոմանք նրանցից չեն վճարել 3 ամիս, մյուսները 6 ամիս, ուրիշները 8 ամիս: Յեվ նրանց համար շատ դժվար կլինի գտնել անմիջապես այնպիսի մի գումար, վորպեսզի հանգցնեն իրենց պարտքը: Հետևաբար կարծես թե այսպիսի յեզրակացություն է հանվում. պարտապաններից պարտքի վճարում չպահանջել, կամ թե չէ պահանջել վորոշ մասներով: Այսպիսի յեզրակացություն ճիշտ չի լինի:

Ամբողջ պարտքը առանց բացառության պետք է վճարվի կոմյերիտականի կողմից: Մենք վերջին հաշվով չենք կարող խրախուսել անդիսցիպլինարությունը, թափթփվածությունը, և այն անհարգալի վերաբերմունքը, վոր ցուցաբերում են առանձին անդամներ դեպի իրենց կազմակերպությունը:

Ուզում ես կոմյերիտմիության մեջ մնալ, մարիր քո անդամակցական մուծումների պարտքը: Սակայն պետք է շեշտել այս հարցի դրվածքը: Պարտքի մարումը պետք է անցկացնել դանդաղ միջոցներով: Վորպես սկզբունք պարտքը պետք է մարել տոմսի փոխանակություն անցկացնելու ժամանակ: Պարտապաններից մենք պետք է պարզենք, իմանանք, թե ինչու անդամավճարներն այսքան ժամանակ չեն վճարել, հրապարակորեն նրանց ամաչեցնենք, նրանցից առանձին անհատներից պարտավորություն վերցնենք, վոր նա իր անդամավճարի պարտքը կմարի այս-ինչ ժամկետներին և այլն: Դրա հետ միասին նրան պետք է բացատրել, վոր այստեղ բանը միայն փողը չէ, այլ վոր անդամավճար չվճարելը



1003
33620

նրան մագնիտացնում է՝ հրում դեպի միության կարգապահության խախտման ուղին:

Սակայն այս բոլորի հետ միասին մենք պետք է ընդգծենք, վոր առանձին չարանենգ տարրեր, վորոնք գիտակցորեն խուսափում են անդամավճար վճարելուց, պետք է կոմսոմոլից վտարվեն. այդպիսիների տոմսերը չփոխանակել:

## ՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ—ԴԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԶՏՈՒՄԸ ՉԷ, ԲԱՅՑ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿ ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ՉԷ

Ի՞նչ է իրենից ներկայացնում կոմյերիտական տոմսի փոխանակման կամպանիան: Կոմյերիտական տոմսի փոխանակումը— դա մեր միության շարքերի զտումը չէ և միևնույն ժամանակ հասարակ տեխնիկական ձեռնարկում չէ: Վոչ վոքի իրավունք չի տրված կոմյերիտական տոմսի փոխանակումը վերածել կազմակերպության զտումի, իսկ չէ՞ վոր այդպիսի տրամադրություններ առանձին վայրերում տեղ են գտել: Մենք պետք է ամբողջ միությանը բարձրաձայն ասենք.— կոմյերիտական տոմսի փոխանակումը—դա կազմակերպության զտումը չէ, և նա, ով կփորձի այդ ձեռնարկումը վերածել զտման, կկատարի կոպիտ սխալ, կխեղաթյուրի կուսակցության և միության դիրեկտիվները: Մենք զտում չենք անցկացնում: Մենք անց ենք կացնում կոմյերիտական տոմսի փոխանակում, բայց միևնույն ժամանակ նաև նա, ով մտածում է, թե կոմյերիտական տոմսի փոխանակումը տեխնիկական ձեռնարկում է և դրա հետևանքով էլ այդ փոխանակմանը մոտենում է ձևականորեն, «ընդհանրապես», նա նույնպես կատարում է ամենակոպիտ սխալ:

Կոմյերիտական տոմսի փոխանակումը պետք է օգտագործենք կոմյերիտմիության դաստիարակչային մարտունակության ուժեղացման համար, իսկ այդ նշանակում է, վոր առանձին կոմյերիտականները, յեթե նրանք չեն հանդիսանում իրական, իսկական կոմյերիտականներ, կարող են վտարվել կոմյերիտմիության շարքերից, կոմյերիտական անդամային տոմսի փոխանակում անցկացնելու ժամանակ: Կոմյերիտական տոմսի փոխանակման մոմենտին հարկավոր է միության շարքերից վտարել նրանց, ով խցկվել է միություն և բացահայտորեն խորթ ելեմենտ է հանդիսանում:

## ՆՈՐ ՏՈՄՍԸ ՀԱՆՁՆԵԼ ԲԱՑ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ

Նոր տոմս տալու հենց փաստը, պետք ե համընթաց լինի յուրաքանչյուր կոմյերիտականի վրա ամենից ավելի դաստիարակչական ներգործություն կազմակերպելու հետ: Անդամային տոմսի հանձնումը պետք ե կատարեն ամենահեղինակավոր կոմյերիտականները: Պետք ե աշխատել, վորպեսզի նոր տոմսի հանձնումը կատարվի հրապարակորեն անկուսակցական յերիտասարդության և հասուն բանվորության ներկայությամբ, կուսակցականների ներկայությամբ, հանդիսավոր պայմաններում: Հանձնելով առանձին կոմյերիտականին իր տոմսը, պետք ե նրանից պահանջել վորոշակի պարտավորություններ: Ասենք յեթե նա անդիսցիպլինավ ե, պահանջել նրանից պարտավորություն այն մասին, վոր նա ուղղվի: Պետք ե նաև կոմյերիտականներին իրավունք տալ կոմյերիտական տոմսի փոխանակում անցկացնելու մոմենտին քննադատական նկատողություններ անել առանձին կոմյերիտականների հասցեյին:

Որինակ, վորպեսզի այս-ինչ կոմյերիտականը, ներկա լինելով կոմյերիտական տոմսի փոխանակման ժամանակ, իրավունք ունենա ասելու, վոր ինքը դեմ չե այն բանին, վորպեսզի այս-ինչ կոմյերիտականին անդամատոմս տան, սակայն նա գիտի, վոր նա ունի այս-ինչ հանցանքները ( проступки), դնում ե այն (հանցանքները) քննության, և թող տոմս ստացողն ինքը արտահայտի իր վերաբերմունքը իր հանցանքների վերաբերյալ: Կամ թե ուրիշ կոմյերիտական կարող ե ասել այն մասին, վոր այս-ինչ կոմյերիտականին չի կարելի տոմս տալ, վորովհետև տոմսին արժանի չե, կտրվել ե կոմսոմոլից, և նրան հարկավոր ե կազմակերպությունից վտարել:

Պետք ե բոլոր կոմյերիտականներին գրավել դեպի կոմյերիտական անդամատոմսի փոխանակությունը: Թող յուրաքանչյուր կոմյերիտական քննարկի իր հանցանքները և մյուս կոմյերիտականների հանցանքները: Բոլոր թվածներից յերևում ե, վոր մենք միության շարքերի զտում չենք անցկացնում և վոր միևնույն ժամանակ դա տեխնիկական ձեռնարկում չե: Գործն այդպես կազմակերպելով, մենք հենց դրանով բարձրացնում ենք մեր տոմսի քաղաքական նշանակությունը: Չե՞ վոր յուրաքանչյուր վոք իրավունք չունի կոմ-



յերիտական տոմս կրելու: Չե՞ վոր յուրաքանչյուր հոգու չենք ընդունում կոմսոմոլի մեջ և վոչ ամեն վոք արժանի յե լինել մեր շարքերում: Մենք տալիս ենք կոմյերիտական անդամատոմս նրան, ով արժանի յե այդ անվանը: Հետևապես կոմյերիտականի տոմսը պատվավոր հեղինակավոր քաղաքական կազմակերպության պատկանելու մասին վկայում են և դնում և այդ կազմակերպության անդամի վրա համապատասխան պարտավորություններ:

## ՀԱՐԿԱՎՈՐ Ե ՆՈՒՐԲ ՄՈՏԵՑՈՒՄ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՌԱՆՁԻՆ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆԻ

Կոմյերիտական տոմսի փոխանակում անցկացնելու մոմենտում անհրաժեշտ ե ամենաուշադիր, նուրբ մոտեցում ունենալ վոչ թե ընդհանրապես կոմյերիտականների առանձին խմբակներին, այլ ամեն մի առանձին կոմյերիտականի: Մեզ մոտ կա ստորին ողակ, վորը շատ հաճախ իսկույն ևեթ չի հասկանում հարցի եյությունը, կարող ե սխալվել, և առանձին պայմաններում հնարավոր են այնպիսի փաստեր, յերբ չափահասի տոմսը չեն փոխի, կոպտագործեն անդամության տոմսի փոխանակության կամպանիան, նրա համար, վորպեսզի ազատվեն այդ չափահասներից: Պետք ե արգելել այդ քայլն անելը: Յեվ նա, ով այդպես կվերաբերվի չափահասների նկատմամբ, նա քաղաքական սխալ կգործի և դրա համար այդպիսի դեպքերին պետք ե մեր կոմյերիտական հասարակությունը դատի: Վտանգ կա, վոր մարդիկ պետք ե ձգտեն ազատվելու այսպես կոչված «մեռած հոգիներից»: Իսկ յերբեմն կոմյերիտականը «մեռած հոգի յե» համարվում նրան կայունի վերաբերմունք ցույց տալու պատճառով։ սակայն իրականում նա գույքե և հանդիսանում ե ակտիվ աշխատավոր, սակայն հաճախ ծանրաբեռնված ե լինում և այդ պատճառով հազվադեպ ե յերևում բջիջի քարտուղարի աչքին և նա նրան «մեռած հոգի յե համարում»: Պետք ե կոմյերիտական տոմս չտալ նրանց, վորոնք թվարկվում են կազմակերպության մեջ, բայց իրականում գոյություն չունեն: Սակայն գոյություն ունեցող մարդկանց, վորոնք կոմյերիտմիության մեջ են և արժանի յեն նոր տոմս ստանալու, ղեկավարությունը պետք ե ապահովի նրանց կոմյերիտական տոմս տալը: Մոտեցումը դեպի մարդիկ պետք ե լինի զգայուն,

ուշադիր: Այստեղ կարող են և անձնական հաշիվներ լինել, վորոնց հետևանքով կարող են վտարվել արժանի մարդիկ, վորոնց վտարելու հարկ չկա: Այդ պետք ե վաղորոք կանխել: Վոչ զգայուն անուշադիր մոտեցման հետևանքով յերբեմն մենք կարող ենք հանդիպել այնպիսի փաստերի, յերբ մարդը պետք ե մեռցվի վոչ միայն քաղաքականապես, այլ և բարոյապես:

Այդ պետք ե կանխել: Պետք ե վարել մեռած մոտեցումը, ինչպես նաև թույլ չտալ միությունից վտարելու այնպիսի պատճառաբանությամբ, վոր «նա ակտիվ չե»: Այդ պետք ե կտրուկ դատապարտել և արգելել: Պետք ե տոմսի փոխանակման շուրջը պրոպագանդիստական աշխատանք ծավալել. ամենամոտակա օրերում Մոսկվայում, Լենինգրադում, մարզային, յերկրային կենտրոններում այդ հարցի համար ակտիվին պետք ե հավաքել, բոլոր կոմյերիտական աշխատողներին, շրջկոմի և բջիջի յուրաքանչյուր քարտուղարի հրահանգել: Այս մասին պետք ե սկսի խոսել մեր մամուլը, և «Կոմսոմոլսկայա Պրավդան» առաջին հերթին:

Պետք ե զանազան հոդվածներ զետեղել՝ կապված կոմյերիտական անդամատոմսի փոխանակության հետ, մամուլի միջոցով կոմյերիտմիության ակտիվին տեղեկացնել այն մասին, թե ինչպես պետք ե ընթանա փոխանակությունը, պարզաբանել—կարելի յե արդյոք · փոխանակության ժամանակ կոմսոմոլից վտարել, կարելի յե արդյոք կոմյերիտականներին տույժերի յենթարկել, կարելի յե արդյոք բողոք տալ այս կամ այն կոմյերիտականի վրա: Տոմսերի փոխանակության հարցերին պետք ե հատկապես նվիրել միության մի քանի օր:

Յուրաքանչյուրը պետք ե իմանա, թե ինքը ինչ պետք ե անի տոմսերի փոխանակության համար, այս ձեռնարկման բարդության կապակցությամբ մենք նրան շատ զգույշ ենք մոտենում: Պետք ե սահմանվի այսպիսի կարգ. փետրվարի 5-ից տոմսերի փոխանակությունը կսկսվի Մոսկվայի, Լենինգրադի մարզում և ԿՍՄ (Կենտրոնական Սևահող մարզում): Մենք այդ անում ենք բոլորովին հասկանալի նկատառումներով, վորպեսզի չսխալվենք, փորձ կուտակենք, լավ շոշափելով հունվարի ընթացքում այդ աշխատանքը, մարտի 15-ին կանցնենք փոխանակությանը միանգամից ամբողջ Միությունում:

Կենտկոմի բյուրոն վորոշել ե տոմսերի փոխանակումը վերջացնել մինչև 1932 թվի հունիսի 5-ը: Անհրաժեշտ ե այդ



աշխատանքը կապակցել գարնանային, դաշտային աշխատանքների հետ: Պայքարել ցանքսի պլանի համար, նշանակում ե պայքարել կոմյերիտական տոմսի համար: Պետք ե սահմանել հերթականություն.—շրջաններից վոր խմբակցության մեջ անցկացնել փոխանակումն առաջին հերթին, վոր խմբակցության մեջ՝ յերկրորդ հերթին և այլն: Բջիջը վորոշում ե կարգը իր մոտ.—վոր ցեխն ե գնալու առաջին հերթին: Ամեն ինչ պետք ե ճշտորեն հաշվել, անցկացնել նախամտածված և կազմակերպված: Բոլոր մարզային, յերկրային կոմիտեներում և հանրապետական կենտկոմներում ստեղծվում են հատուկ յեռյակներ կամ հնգյակներ, վորոնք ամենօրյա աշխատանքով ղեկավարում են անդամատոմսի փոխանակումը և դեկադում մի անգամ հաշվետվություն են տալիս մարզկոմների, յերկրկոմների և հանրապետությունների կենտկոմների բյուրոներին: Ահա թե ինչպիսի կենտրոնացված կարգ ե հարկավոր սահմանել, վորը պիտի հաստատվի Կենտկոմի կողմից:

Արդեն կան այս ձեռնարկման թերագնահատման փաստեր: Յերբ մենք առաջարկեցինք տեղեկություններ ներկայացնել յեռյակի կազմի մասին, մեզ հաղորդեցին՝ յեռյակի առաջին անդամը այս-ինչ բաժնի վարիչի տեղակալն ե, յերկրորդը մյուս բաժնի վարիչի տեղակալն ե, նախագահը կազմ. բաժնի վարիչն ե:

Յեռյակի կամ հնգյակի նախագահը պետք ե լինի կոմիտեյի առաջին քարտուղարը: Այդ գործին պետք ե մասնակից անել կուս. կազմակերպություններին, առանց վորի այդ գործը մենք գլուխ չենք հանել:

Յեվ վերջինը՝—պետք ե ամրացնել տեխնիկական ապարատը: Այժմ հատկապես պետք ե ամրացնել ինֆորմացիոն-վիճակագրական ապարատը: Պետք ե օգտվել այդ գործով, վորպեսզի ստեղծենք վորակյալ տեխնիկական ապարատ.—յերկրորդական չդարձնենք նրան, օգնենք նրան և ամրացնենք նրան: Այլապես չի կարելի:

## ՀԱՄԼԿՅԵՄ ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՀամԼԿՅԵՄ ԿԿ-ի վորոշման հիման վրա, ամբողջ Միության մեջ անցկացվում է կոմյերիտական անդամատոմսերի և թեկնածվական կարտիչկաների փոխանակումը կոմյերիտմիության մեջ: «Դա հսկայական քաղաքական նշանակություն ունեցող ձեռնարկում է: Անդամատոմսերի փոխանակումը պետք է հանդիսանա ՀամԼԿՅԵՄ անդամների ել ավելի մոբիլիզացիան կուսակցության գլխավոր գծի անցկացման, ՀամԼԿՅԵՄ շարքերի գաղափարական մարտունակության հետագա ել ավելի բարձրացման, ցանացան ոպորտունիստական թեքումների դեմ պայքարն ուժեղացնելու համար» (ՀամԼԿՅԵՄ ԿԿ-ի նամակից):

Կոմյերիտական անդամատոմսերի փոխանակումը անհրաժեշտ է կապել 1932 թվի կոնտրոլ թվերի կատարման համար մղվող պայքարին կոմյերիտմիության մասնակցությունը բարձրացնելու հետ: Արդֆինպլանների կատարման համար, կոլտնտեսությունների տնտեսական-կազմակերպական և քաղաքականապես ամրացման համար ապահովելով յուրաքանչյուր կոմյերիտականի ակտիվ մասնակցությունը կոմյերիտական առորյա աշխատանքներում: Կոմյերիտական անդամատոմսերի փոխանակումը անհրաժեշտ է ոգտագործել կոմյերիտմիության մարքս-լենինյան դաստիարակության բարձրացման, յուրաքանչյուր կոմյերիտականի մարքս-լենինյան դաստիարակության ցանցում ընդգրկելու հետ: Անհրաժեշտ է ձգտել, վորպեսզի յուրաքանչյուր կոմյերիտականի կողմից վճարվեն անդամավճարների ապառիկները: ՀամԼԿՅԵՄ Անդրյերկոմը կատեգորիկ կերպով զգուշացնում է բոլոր կոմյերիտական կազմակերպություններին մի կողմից կոմյերիտական տոմսերի փոխանակումը կազմակերպության



դասում դարձնելու փորձերից, մյուս կողմից այն միտումներից, վոր դա կհամարեն հասարակ տեխնիկական ձեռնարկում: Այդ փորձերի դեմ պետք է հայտարարվի վճռական պայքար, ապահովելով ուշադիր և լուրջ վերաբերմունք հանդեպ յուրաքանչյուր կոմյերիտականին: Թույլ չտալ, վոր վորևէ կոմյերիտական հեռացվի միությունից առանց անհրաժեշտ հիմնավորման. դրա հետ միասին անհրաժեշտ է ազատել կոմյերիտմիությունը անհարազատ և ծածկված ելեմենտներից:

ՀամԼԿՅԵՄ Անդրյերկոմը պարտավորեցնում է բոլոր կազմակերպություններին ՀամԼԿՅԵՄ ԿԿ-ի վորոշումների, նամակի և ընկ. Կոսարևի ճառի հիման վրա ծավալելու մասսայական-բացատրական կամպանիա, քննելով կոմյերիտական անդամատոմսերի փոխանակման խնդիրները քաղաքային և շրջանային ակտիվի, բջջային ժողովներում, նախորոք հրահանգչական զեկուցումներ տալ ակտիվին և բոլոր կոմյերիտականներին տոմսերի փոխանակման կարգի մասին:

1. Անդրկովկասյան կոմյերիտական կազմակերպությունների մեջ ձեռնարկել անդամատոմսերի և թեկնածվական կարտիչկաների փոխանակումը մարտի 15-ից և վերջացնել հունիսի 5-ին:

2. Սահմանել հետևյալ ժամկետները կոմյերիտական անդամատոմսերի փոխանակման համար:

ա) Ադրբեջանում մարտի 15-ից մինչև մայիսի 15-ը.

բ) Վրաստանում և Հայաստանում ապրիլի 1-ից մինչև հունիսի 1-ը:

3. Հանրապետական ՀԼԿՅԵՄ ԿԿ-ները (բացառությամբ Բաքվի և Թիֆլիսի կոմիտեների, վորոնք իրենք են սահմանում շրջանների հերթականությունը) պետք է սահմանեն տոմսերի փոխանակման համար հերթականություն նահանգական, քաղաքային և ռայոնական կոմյերիտական կազմակերպությունների համար, խիստ պահպանելով ՀամԼԿՅԵՄ Անդրյերկոմի սահմանած ժամկետները:

Նահանգական, քաղաքային և շրջանային կոմյերիտական կոմիտեները (բացառությամբ Բաքվի և Թիֆլիսի կոմյերիտական կոմիտեների, վորտեղ հերթականությունը սահմանում են ռայկոմները) սահմանում են հերթականություն միության տոմսերի փոխանակման համար ըստ կոմիտեների, կոլլյուրաների, բջիջների, բաժանելով նրանց համապատաս-

խան գրուպաների: Կոմխմբերը և կոլբյուրոները սահմանում են հերթականություն տոմսերի փոխանակման համար ցեխբջիջների համար:

4. ՀամԼԿՅԵՄ Անդրյերկոմն առաջարկում է բոլոր կոմյերիտական կոմխմբերին խստորեն ղեկավարելու անդամատոմսերի դիմաց գանձումների մասին— ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի վորոշումներով: Անդամատոմսերի դիմաց հավաքված գումարները հանձնել տեղական կուս. կազմակերպություններին այն կարգով, ինչպես հանձնվում են անդամավճարները:

5. ՀամԼԿՅԵՄ Անդրյերկոմն առաջարկում է հանրապետական ԼԿՅԵՄ Կենտկոմներին 15 որը մեկ անգամ տալ ինֆորմացիա ՀամԼԿՅԵՄ Անդրյերկոմին՝ բաժանված տոմսերի, նրանց քանակի և փոխանակման ընթացքում գանձված գումարների մասին:

6. ՀամԼԿՅԵՄ Անդրյերկոմի կազմ-հրահանգչական բաժնին, Համ. ԿԿ Անդրյերկոմի գործերի վարչությանը ներկայացնել տեղեկանք հանրապետական կենտկոմներին ուղված տոմսերի քանակի մասին, վորի հիման վրա պահել հանրապետական ԼԿՅԵՄ Կենտկոմների նախահաշիվներից տոմսերի դիմաց գումարները:

7. Անդրկովկասյան կոմյերիտական կազմակերպություններում անդամատոմսերի փոխանակման գործը ղեկավարելու համար ընտրել հնգյակ հետևյալ կազմով.

1. Ընկ. Վերշկով (նախագահ).
2. Ընկ. Շախվերդովա (Անդր. ԲԳՏ).
3. Ընկ. Կուչիաշվիլի.
4. Ընկ. Բոնդարենկո (Համ. Կ(բ)Կ Անդրյերկոմի կազմ.-հր. բաժնի տեղակալ).
5. Ընկ. Ազարաշվիլի (Վ. ԼԿՅԵՄ ԿԿ-ի քարտուղար):

Հնգյակի կազմը ներկայացնել ՀամԼԿՅԵՄ ԿԿ-ին ի հաստատություն:

8. Առաջարկել հանրապետական ԼԿՅԵՄ կենտկոմներին կազմակերպելու նույնպես հնգյակներ կոմյերիտական անդամատոմսերի փոխանակումը ղեկավարելու համար և վոչ ուշ մինչև փետրվարի 25-ը հնգյակների կազմը ներկայացնել ՀամԼԿՅԵՄ Անդրյերկոմ հաստատելու համար:

9. Նահանգային, մայրաքաղաքային, քաղաքային և շրջանային կոմխմբերին՝ կազմակերպել յեռյակներ-հնգյակ-



ներ կոմյերիտական անդամատոմսերի փոխանակումը ղեկավարելու համար: Յեռյակների և հնգյակների կազմում ընտրվում են նահանգային կոմխմբերին կից— նահանգական վերահսկիչ հանձնաժողովների ներկայացուցիչները, քաղկոմներին և շրջկոմներին կից ՔՎՀ և ՇՎՀ-ների ներկայացուցիչները, իսկ բջիջներին կից յեռյակներում՝ կուս. բջիջի ներկայացուցիչները:

Հանրապետական ԼԿՅԵՄ Կենտկոմները հաստատում են նահանգական, մայրաքաղաքային կոմխմբերի և քաղկոմների ու շրջկոմներին կից կազմված յեռյակ-հնգյակների կազմը: Նահանգական (օկրուգ) կոմխմբերը հաստատում են ռայոնական և քաղաքային բջիջների յեռյակներին: Քաղկոմները (բացառությամբ Բաքվի և Թիֆլիսի կոմխմբերի, վորտեղ բջջային յեռյակները հաստատվում են ռայկոմների կողմից) և շրջկոմները հաստատում են բջջային յեռյակները:

10. ՀամԼԿՅԵՄ Անդրյերկոմը պարտավորեցնում է Լ. Կ. ՅԵ. Մ. կենտկոմներին կից հնգյակներին, յուրաքանչյուր 10-օրյակ ինֆորմացիա տալ ՀամԼԿՅԵՄ Անդրյերկոմին կոմյերիտական անդամատոմսերի և թեկնածվական կարտիչկաների փոխանակման ընթացքի մասին:

11. Պարտավորեցնել հանրապետական կենտկոմներին կազմակերպելու դասընթացներ, վորոնց միջոցով պատրաստել ակտիվի և տոմսերի փոխանակման համար լեկտորներ այն հաշվով, վոր կուրսերի աշխատանքները վերջացվեն վոչ ուշ, քան մինչև մարտի 15-ը:

12. Հանրապետական կոմխմբերին՝ ապահովել կենտկոմների ներկայացուցիչների ուղարկումը կոմյերիտական անդամատոմսերի և թեկնածվական կարտիչկաների փոխանակման գործում, ստորին կազմակերպություններին օգնելու համար:

Քաղկոմներին և շրջկոմներին՝ նույնպես իրենց հերթին ապահովել կոմխմբերի աշխատակիցների և ակտիվի կցումներով ռայկոմներին և բջիջներին օգնելու համար:

13. Խնդրել Համ. Կ(բ)Կ. Անդրյերկոմին և Անդր. Կ. Վ. Հ-ին տալու ցուցումներ կուս. կազմակերպություններին և վերահսկիչ հանձնաժողովներին կոմյերիտական անդամատոմսերի փոխանակմանն օգնելու և ղեկավարելու մասին:

## ՀԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑԱԿԱՆ ՏՈՄՍԵՐԻ ՅԵՎ ԹԵԿՆԱԾՎԱԿԱՆ ԿԱՐՏԻՉԿԱՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. Միութենական անդամակցական տոմսերի և թեկնածվական կարտիչկաների փոխանակման կամպանիայի նախապատրաստական աշխատանքները ավարտել մինչև ապրիլի 1-ը: Գործնական աշխատանքները սկսել ապրիլի 1-ից մինչև 1-ն հունիսի 1932 թ.:

2. Տոմսերի փոխանակման կամպանիայի համար ըստ շրջանների սահմանել հետևյալ ժամկետը՝ և Կենտկոմի կողմից հաստատել հետևյալ ընկերներին, վորպես լիազորներ:

Ապրիլի մեկից մինչև մայիսի 1-ը սահմանվում է ժամկետ հետևյալ շրջանների համար՝

1. Յերևան—Ավագով և Ջհանգուլյան.
2. Լենինական—Կուրտիկյան և Սերյանյան.
3. Ալլահվերդի—Շեկոյան և Մելիքյան.
4. Արթիկ-Տուֆ—Յեղիկյան և Քոլոյան.
5. Ղարաքիլիսա—Հարությունյան և Գաբրիելյան.
6. Ղուրդուղուլի—Գեվորգյան Ա. և Մանուկյան.
7. Ղամարլու—Մանթաշյան և Խաչատրյան
8. Ստեփանավան—Զաքարյան և Բարայան.
9. Վաղարշապատ—Գեվորգյան Մ. և Ներսիսյան



Մայիսի 1-ից մինչև 20-ը սահմանել ժամկետ հետևյալ շրջանների համար

1. Վեդի
2. Ախտա
3. Ղափան
4. Գորիս
5. Սիսիան
6. Կոտայք
7. Դիլիջան
8. Աղբաբա
9. Աբարան
10. Աշտարակ

Մայիսի 15-ից մինչև հունիսի 1-ը սահմանել ժամկետ հետևյալ շրջանների համար

1. Թալին
2. Նոր-Բայազետ
3. Մարտունի
4. Փաշալու
5. Իջևան
6. Շամշադին
7. Քեշիշքենդ
8. Բասարգեչար
9. Մեղրի

Այս շրջանների նախապատրաստական աշխատանքների պատասխանատվությունը թողնել ամբողջապես շրջկոմների քարտուղարների վրա, իսկ Կենտկոմի լիազորներ կցելու խնդիրը այդ շրջաններին քննել առանձին:

3. Առաջարկել քաղկոմ-շրջկոմներին շրջանային ակտիվից (շրջկոմի և բյուրոյի անդամներից) մեկական ընկերներ ամրացնելու յուրաքանչյուր բջջին տոմսերի փոխանակման կամպանիայի աշխատանքները ղեկավարելու համար, դարձնելով նրան տվյալ բջջի պատասխանատու լիազոր մինչև կամպանիայի վերջը: Յեվ նույն կարգով սահմանել ժամկետներ տոմսերի փոխանակման ընթացքում տեղական բջիջների համար:

4. Առաջարկել քաղկոմ-շրջկոմներին անմիջապես քննելու և ձեռնարկելու բջիջներում միության անդամակցական տոմսերի, թեկնածվական կարտիչկաների փոխանակման կամպանիայի հետ կապված բոլոր խնդիրները և այդ կամպանիայի շուրջը ստեղծել լայն մասսայական կարծիք: Բոլոր շրջկոմները-քաղկոմները և բջիջները պետք է քննեն ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի, Անդրյերկոմի և ՀԼԿՅԵՄ Կենտկոմի վորոշումները, ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի նամակը և հատուկ հրահանգը և ընկ. ԿՈՍԱՐԵՎԻ ճառը տոմսերի փոխանակման մասին:

5. Տոմսերի փոխանակման կամպանիայի ոպերատիվ ղե-

կատարության վողջ պատասխանատվությունը դնել հատուկ հնգյակ-յեռյակների վրա, վորոնք պետք ե կազմակերպվեն քաղկոմ-շրջկոմներին և բջիջներին կից:

6. Քաղկոմշրջկոմներին և բջիջներին կից կազմակերպվելիք հնգյակ-յեռյակներում վորպես կանոն պետք ե մտնեն շրջաններում կուս. շրջկոմների և շրջ. Վ.Հ.-ների ներկայացուցիչները, իսկ բջիջներում՝ կուս. բջիջների:

Ծանոթություն.— Կազմակերպվելիք հնգյակ-յեռյակների նախագահները լինելու յեն շրջկոմի և բջիջների քարտուղարները:

7. Հաստատել ՀԼԿՅԵՄ Կենտկոմին կից կենտրոնական հնգյակի կազմը հետևյալ ընկերներից՝

1. Ավագով (նախագահ)
2. Յե. Հարությունյան (անդամ)
3. Հ. Ջհանգուլյան »
4. Ա. Վարդապետյան » Կ.Վ.Հ.-ից
5. Ս. Գրիգորյան » Կուս. Կենտկոմից

Կարմիր բանակում տոմսերի փոխանակման կամպանիայի ամբողջ պատասխանատվությունը դնել Հայկական Դիվիզիայի ԼԿՅԵՄ կազմակերպիչ ընկ. Գուրգեն Գուլզադյանի վրա:

8. Բջիջներին կից կազմակերպված յեռյակները հաստատվում են քաղկոմ-շրջկոմների կողմից, իսկ քաղկոմ-շրջկոմներինը՝ Կենտրոնական Կոմիտեյի կողմից:

9. Առաջարկել քաղկոմ-շրջկոմներին վոչ ուշ քան մարտի 10-ը ներկայացնել Կենտկոմ կազմակերպված հնգյակների կազմը ի հաստատություն, իսկ բջիջների յեռյակների կազմը շրջկոմների և քաղկոմների կողմից պետք ե հաստատվի վոչ ուշ քան մարտի 10-ը:

10. Պարտավորեցնել բոլոր քաղկոմ-շրջկոմներին տոմսերի փոխանակման կամպանիայի ընթացքի մասին 5 որը մեկ անգամ ինֆորմացիա ներկայացնել Կենտրոնական Կոմիտեյին, նույն կերպով բջիջներից քաղկոմ-շրջկոմներին:

11. Մինչև մարտի 15-ը հրավիրել քաղկոմ-շրջկոմների հաշվ.-ինֆորմ. բաժինների հանրապետական խորհրդակցություն տոմսերի փոխանակման կամպանիայի հետ կապված հաշվառման և տեխնիկական աշխատանքները հաջող անցկացնելու նպատակով:

12. Պարտավորեցնել բոլոր շրջկոմ-քաղկոմներին տեղա-



կան կուս. շրջկոմների միջոցով կազմակերպելու շրջ. կենտրոններում 5-որյա դասընթացքներ բջջային լիազորների և մեկական հոգի վորպես տեխնիկական աշխատանքները ղեկավարելու համար: Գտնել անհրաժեշտ բոլոր շրջկոմների և քաղկոմների համար վերցնելու մեկական ընկեր, կամպանիայի ընթացքում հաշվառման աշխատանքները կանոնավորելու համար (տեղական միջոցներով):

13. Հանձնարարել ընկ. Ա. Գեվորգյանին 10 որվա ընթացքում հրատարակելու հայերեն լեզվով ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի, Անդրյերկոմի և ՀԼԿՅԵՄ Կենտկոմի վորոշումները, ընկ. Կոսարևի ճառը և ՀԼԿՅԵՄ Կենտկոմի հրահանգը միության անդամակցական տոմսերի վերաբերյալ:

14. Տոմսերի փոխանակման ժամանակ սահմանել հետևյալ կարգը—տոմսերի վճարի համար (ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի վորոշումը):

ա) Բանվոր-ծառայող-արհեստավորները, Կ. բանակի բաղ.-հրամկազմը և բարձրագույն դպրոցներում սովորողները, վորոնք ամսական ստանում են մինչև 60 ռ. աշխատավարձ, վճարում են 25 կ.:

60-ից մինչև 110 ռուբլի ստացողները վճարում են 50 կ.
111-ից » 175 ռ. » » 75 կ.
176-ից բարձր ստացողները մուծում են 1 ռուբլի:

բ) Ֆաբզործուսների ուսանողները, գյուղացիները և կոլխոզնիկները մուծում են 25 կոպեկ:

գ) Տարրական դպրոցների աշակերտները՝ 10 կոպ.:

Ծանոթություն.— ա) Բարձրագույն դպրոցներում սովորողները, վորոնք չեն ստանում թոշակ և չունեն ինքնուրույն աշխատանք, անդամատոմսերի համար մուծում են 25 կոպ.:

բ) Մանկատան սաները և նրանք, վորոնք ընդունակ չեն ֆիզիկական աշխատանքի (պենսիա ստացողները), անդամատոմսերի համար մուծելիք գումարից ազատվում են:

գ) Կ.-բանակայինները տոմսերի համար մուծելիք գումարից ազատվում են:

15. Անդամատոմսերի դիմաց գանձվելիք ամբողջ գումարները քաղաքային և շրջանային կոմիտեների կողմից պետք ե տեղափոխվեն Հ.Կ.(բ)Կ. Կենտկոմի ընթացիկ հաշվին այն ձևով, ինչ ձևով փոխադրում են անդամավճարները:

ա) ՀԼԿՅԵՄ Կենտկոմը Հ.Կ.(բ)Կ ԿԿ-ին ներկայացնում է տեղեկություն տեղի կազմակերպություններին ուղարկած տոմսերի քանակի մասին և նրա հիման վրա դուրս է գալիս տեղերին ուղարկվելիք վարկերի գումարներից:

բ) Համարել պարտադիր տոմսերի փոխանակման ընթացքում, վորպեսզի բոլոր կոմյերիտականները լրիվ մուծեն իրենց ունեցած պարտքը անդամավճարների մուծման խնդրում:

գ) Քաղաքային և շրջանային կոմիտեները պարտավորվում են յուրաքանչյուր 10 որը մեկ անգամ ինֆորմացիա ուղարկել Կենտկոմ՝ բաժանված տոմսերի քանակի և մուծված գումարների վերաբերյալ:

16. Առաջարկել կոնֆլիկտային հանձնաժողովին՝ ընկ. Գուրասաֆարյանի պատասխանատվությամբ 3 ամսվա ընթացքում տալու շրջանային և քաղաքային կոնֆլիկտային հանձնաժողովներին դիրեկտիվ, նրանց անելիքների վերաբերյալ տոմսերի փոխանակման կամպանիայի ընթացքում:

17. Սույն վորոշումը ամբողջովին տեղափոխել կուս. Կենտկոմ:

---



# ՀՐԱՀԱՆԳ

Մարզկոմների, յերկրկոմների լիազորներին և ազգային հանրապետությունների կոմյերիտմիության ԿԿ՝ շրջանային կոմիտեներին և ՀամԿոմՅերիտՄիության բոլոր բջիջներին ոգնելու մասին կազմակերպություններում աշխատանքը ծավալելու համար անդամատոմսերի փոխանակության կամպանիայի անցկացման կապակցությամբ

*Մարզկոմների, յերկրկոմների, ազգային հանրապետությունների ԿԿ-ների լիազորները և կոմյերիտմիության բոլոր բջիջները անդամատոմսի փոխանակության կապակցությամբ բացատրական աշխատանքը պետք է դնեն այնպես, վորպեսզի ՀամԼԵՆԿՈՄՅերիտմիության ամեն մի անդամ ճիշտ իմանա անդամատոմսերի փոխանակության կարգը և փոխի անդամատոմսը:*

*Ամբողջ աշխատանքի ընթացքում լիազորները ղեկավարվում են ՀամԼԿՅԵՄ Կ. Կ. վորոշմամբ և նամակով, վորոնք հրապարակված են «Կոմսոմոլսկայա Պրավդայում» 1932 թ. հունվարի 20-ին: Լիազորների խնդիրը հանդիսանում է՝*

*1. Ոգնել շրջ. Կ. և բջիջներին շրջանային կոմխմբերի և բջջային յեռյակի կառուցման գործում անդամատոմսը փոխանակելու համար:*

*2. ԿՅԵՄ կոմիտեների հետ միասին սահմանել անդամատոմսերի փոխանակության ժամկետները ըստ բջիջների և շրջանների:*

*3. Հսկել անդամատոմսերի և հաշվառման նյութերի ժամանակին և ճիշտ առաքման, բաշխման և պահման վրա:*

*4. Ստուգել շրջանի ամբողջ ապարատի, բջջի պատրաս-*

տականությունը անդամատոմսի փոխանակության համար:

5. Ստուգել անդամատոմսերի փոխանակության համար սահմանված ժամկետների կատարումը ըստ բջիջների, անդամատոմսերի փոխանակության կարգը և անդամատոմսերի համար գանձվող դրամական վճարները:

6. Զանազան խորհրդակցություններ և հրահանգչական ցուցմունքներ տալ անդամատոմսի փոխանակության կապակցությամբ:

7. Ուշադիր հետևել այն բանին, վորպեսզի ամեն մի կոմյերիտական փոխանակի իր տոմսը:

8. Մարզկոմի տասնօրյա ինֆորմացիան անդամատոմսի փոխանակության ընթացքի մասին:

9. Մարզկոմների, յերկրկոմների, ազգային հանրապետությունների ԿՅԵՄ ԿԿ լիազորները յուրաքանչյուր տասնօրյակում անց են կացնում շրջկոմում, բջջում ֆինանսական հաշվետվության լիակատար ստուգում (տոմսի համար կատարվող գանձումը, տոմսի փոխանակության ծախսերը) և հետևում են այն բանին, վորպեսզի անդամատոմսի համար կատարվող բոլոր մուծանքները յուրաքանչյուր տասնօրյակում շրջ. կոմիտեն փոխադրի մարզկոմի հատուկ բացված հաշվին:

10. Մարզկոմի, յերկրկոմի, ազգային հանրապետության ԿՅԵՄ ԿԿ լիազորին իրավունք է վերապահվում կասեցնելու շրջանային կոմ. կամ բջջի վորոշման կենսագործումն այն դեպքում, յեթե այդ վորոշումը հակասում է ԿԿ-ի կամ մարզկոմի վորոշմանը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այնտեղ, վորտեղ կան շրջկոմ և բջիջների լիազորներ, վերջիններս իրենց աշխատանքն անցկացնում են, խիստ ղեկավարվելով տվյալ հրահանգով:

ՀԱՄԼԿՅԵՄ ԿԿ



# ՀՐԱՀԱՆԳ

## Կոմյերիտական անդամատոմսի փոխանակության անցկացման տեխնիկայի մասին

### I. ԱՅՆ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿԻ ԿԱԶՄԵԼԸ, ՎՈՐՈՆՑ ԱՆԴԱՄԱՏՈՄՍԵՐԸ ՅԵՆԹԱԿԱ ՅԵՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԲՋԻՋՈՒՄ.

Բջջի ժողովից յերեք որ առաջ, վորը նվիրված է անդամատոմսի փոխանակմանը, բջջի բյուրոն բջջային յեռյակի հետ միասին կազմում են բոլոր կոմյերիտականների անվանացուցակը: Անվանացուցակը կազմվում է հետևյալ ձևով. 1) համար ըստ կարգի, 2) ազգանուն, անուն և հայրանուն, 3) սեռ, 4) ծննդյան տարեթիվը, 5) անդամության հաստատման տարին և ամիսը, Համ. Կ(բ)Կ պատկանելությունը և ստաժը, 7) սոցիալական դրությունը, 8) զբաղմունքների տեսակը, 9) ազգությունը, 10) նշումներ անդամատոմսի փոխանակության անցկացման մասին:

ՀամԼԿՅԵՄ թեկնածուները հենց այս նույն ձևով գրվում են անվանացուցակի վերջում:

Անվանացուցակն անպայման թանաքով է լրացվում:

### II. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ՏԱԼԸ ՇՐՋԿՈՄՈՒՄ

Շրջկոմը, յելնելով ժամկետներից, կազմակերպության բջիջների և կոմյերիտականների առկայությունից, անդամատոմսերի փոխանակության գործով զբաղվող լիազորներին ոգնելու համար ընտրում է լավ գրագետ ցուցակագրողների անհրաժեշտ քանակ հաշվառման, անձնական քարտերի և տոմսերի լրացման համար:

Հաշվառման քարտերի լրացման համար նախքան բջիջ

գնալը շրջանի լիազորը ցուցակագրողներին անպայման պետք է հրահանգի քարտերի և տոմսերի լրացման տեխնիկայի մասին և պարզի ամեն մի վոչ պարզ հարց. Յուրաքանչյուր ցուցակագրող պետք է լավ յուրացնի փոխանակության տեխնիկայի հրահանգը: Բջիջ գնալիս ցուցակագրողը հետը վերցնում է գրչակոթ, թանաք, գրչածայր, ծծող թուղթ, անհրաժեշտ քանակությամբ հաշվառման քարտեր և թղթապանակ վերջիններիս համար, լարան (шпагат) և այլն:

## Հաշվառման քարտերի լրացնելը բջջում և փոխանակության հանրագումարների ամփոփումը

Բջիջ գալուց հետո ցուցակագրողը ստանում է բջջի կոմյերիտականների անվանացուցակը և այնուհետև մեկ-մեկ կանչելով լրացնում է հաշվառման քարտը մեկ որինակից, վորը լրացնելուց հետո կոմյերիտականից առնում է հին տոմսը, կցելով այն լրացված հաշվառման քարտին:

Իրեն՝ հարցափորձի յենթարկվողին արգելվում է հաշվառման քարտ լրացնելը:

Հաշվառման քարտեր լրացնելը վերջացնելուց հետո կոմյերիտականների բջջային անվանացուցակը, վորոնց անդամատոմսերը յենթակա յեն փոխանակության, ցուցակագրողը իր հետ վերցնում է շրջկոմին հանձնելու համար:

Շրջկոմում ցուցակագրողը լիազորի ղեկավարությամբ կազմում է փոխանակությունն անցկացած տոմսի ամփոփ տեղեկագիրը հաշվառման քարտերի հիման վրա և փոխանակության չներկայացված տոմսի ամփոփ տեղեկագիրը բջջային անվանացուցակի հիման վրա: Ամփոփ տեղեկագրերի ձևերը պետք է վերցնել շրջանի լիազորից:

## Անձնական քարտեր և անդամատոմսեր լրացնելը

Ցուցակագրվողի կողմից, բջջից բերված հաշվառման քարտերի հիման վրա, շրջկոմում կազմվում է անձնական քարտը և դուրս է գրվում անդամատոմսը:

Այդ աշխատանքը տանում է անպայման լավ գրագետ ընկերների մշտական մի խումբ շրջկոմյակի անդամի անմիջական հսկողության տակ:

Դուրս գրված անդամատոմսերը մտցվում են բաշխվող



ցուցակի մեջ ըստ առանձին բջիջների: Այդ ցուցակները անդամատոմսի հետ միասին հանձնվում են բջջի քարտուղարին կամ լիազորին: Անդամատոմսերը կոմյերիտականների ձեռքը տալուց հետո ցուցակը անդամատոմսի համար հավաքված դրամական գումարի հետ միասին վերադարձվում է շրջկոմ: Դրամները մտցվում են կուսակցական կոմիտեյի ֆինմասը, իսկ ցուցակները պահվում են հատուկ թղթապանակներում՝ շրջկոմում: Ցուցակները չեն կարող վոչնչացվել, նրանք ծառայում են անդամատոմսերի ծախսման և վերջիններիս համար դրամական հավաքումի փաստաթղթեր:

Հաշվառման քարտերը նմանապես ուղարկվում են բջիջին, իսկ անձնական քարտերը պահվում են շրջկոմում: Կոմյերիտականների հետագա հաշվառման կարգը սարքվում է հատուկ հրահանգով—«Հրահանգ կոմյերիտականների անհատական հաշվառման դրվածքի մասին ՀամԼԿՅԵՄ բջիջներում և կոմիտեներում»:

Անդամատոմսի կանոնագրությունը սահմանված է հատուկ հրահանգով:

Հին կոմյերիտական անդամատոմսերը և անձնական քարտերը պահվում են յերեք ամիս շրջանի անդամատոմսերի փոխանակությունը վերջացնելուց հետո: Այս ժամկետն անցնելուց հետո վոչնչացվում են:

## Կոմյերիտական անդամատոմսի փոխանակության շրջանային հանրագումարներ կազմելը

Շրջանի լիազորը յուրաքանչյուր տասնօրյակում կազմում է ամփոփ տեղեկագիր շրջանի անդամատոմսի փոխանակության արդյունքների մասին և ուղարկում վերադաս կոմիտեյին:

Այդ ամփոփումները տրվում են բջջային ամփոփումների և անդամատոմսերի հատ-հատ փոխանակության անցկացման հանրագումարների հիման վրա անմիջականորեն շրջկոմում: Կազմակերպության ամբողջ աշխատանքը վերջացնելուց հետո կազմվում է հանրագումարային շրջանային ամփոփում և մի որինակ ուղարկվում է մարզկոմին (յերկրկոմ, հանրապետության ԿԿ), իսկ յերկրորդն անմիջականորեն ՀամԼԿՅԵՄ ԿԿ-ին (ամփոփման ձևը կցվում է):

## ԱՄՓՈՓՄԱՆ ՁԵՎԸ

Անդամատոմսերի փոխանակության հանրագումարների մասին

| Կազմակերպական-ների խմբակներ | Բջիջների անվանումը | Ընդամենը | | Ընդհանուր կազմից | | | ԿՑԵՄ ստաժ | | Սոցիալական դրությունը | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Բջիջներ | ՀամԼԿՑԵՄ անդամներ | Աղջիկներ | Համ Կ(բ)Կ անդամներ և թեկնածուներ | Մինչև 23 տարեկաններ | Մինչև 1930 թ. ներառյալ մտածները | 1931/1932 թ. մտածները | Բանվորներ | Կոլտնտեսականներ | Անհատ գյուղացիներ | Մնացածը |
| Անդամատոմսի փոխանակություն անցածներ | Արտադրական (բանվորներ) բջիջներ | | | | | | | | | | | |
| | Խորհտնտեսային | | | | | | | | | | | |
| | Կոլտնտեսային | | | | | | | | | | | |
| | Բոլոր մնացածները | | | | | | | | | | | |
| | Բոլոր բջիջներում | | | | | | | | | | | |
| Անդամատոմսի փոխանակություն չանցածներ | Արտադրական (բանվորներ) բջիջներ | | | | | | | | | | | |
| | Խորհտնտեսային | | | | | | | | | | | |
| | Կոլտնտեսային | | | | | | | | | | | |
| | Բոլոր մնացածները | | | | | | | | | | | |
| | Բոլոր բջիջներում | | | | | | | | | | | |



# ՀՐԱՀԱՆԳ

## ԿՈՄԵՐԻՏԱԿԱՆ ԱՆԴԱՄԱՏՈՄՍԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՅԵՎ ՏՐՎԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

*(ՀամԼԿՑԵՄ քաղաքացիական կազմակերպությունների համար)*

1. Ամբողջ կազմակերպության մեջ սահմանվում է կոմերիտական անդամատոմսի միասնական ձև, որը (անդամատոմսը) պատրաստվում է բացառապես ՀամԼԿՑԵՄ ԿԿ-ի կողմից: Անդամատոմսեր տեղերում պատրաստելն անպայման արգելվում է:

2. Անդամատոմսերն ունեն համամիութենական համարակալություն, որը սահմանվում է ՀամԼԿՑԵՄ ԿԿ կողմից:

3. Անդամատոմսեր տալու իրավունքը պատկանում է ԼԿՑԵՄ շրջկոմներին և քաղկոմներին:

4. Անդամատոմսերի բլանկներն ուղարկվում են ՀամԼԿՑԵՄ ԿԿ-ի կողմից տեղական կազմակերպություններին՝ առհաշիվ ազգային հանրապետությունների ԿԿ, մարզկոմներին, յերկրկոմներին:

Ծանոթություն. — Անդամատոմսերի բլանկներն ուղարկվում են բեռնագրի կրկնակով ( накладная и дубликат ), յուրաքանչյուր կապոցում դնելով 1000 հատ: Կապոցի վրա պետք է լինի վերստուգիչ քարտ և պլոմբ:

Մարզային, յերկրային կազմակերպությունների կոմիտեները և ազգային հանրապետությունների ԿԿ ՀամԼԿՑԵՄ ԿԿ-ից անդամատոմսերի բլանկներ ստանալու ժամանակ ստուգում են նրանց քանակը, համարակալությունը և լրացնում են բեռնագրի կրկնակը, ուղարկելով այն հետ ՀամԼԿՑԵՄ

ԿԿ-ին վորպես անդամատոմսերի, բլանկների ստացման հաստատում:

6. Անդամատոմսերի բլանկների պակասորդ, փչացում և այլն հայտաբերելու դեպքում արձանագրություն է կազմվում, վորի մի օրինակն ուղարկվում է ՀամԼԿՅԵՄ ԿԿ-ին. արձանագրությունը պետք է ստորագրված լինի ԿՅԵՄ կոմիտեյի քարտուղարի կողմից:

7. ՀամԼԿՅԵՄ ԿԿ անդամատոմսերի բլանկներն ուղարկում է՝ յելնելով տվյալ կազմակերպության կազմի աճից (վորոշ ավելցուկով): Մարզկոմները, յերկրկոմները և ազգային հանրապետությունների ԿԿ անդամատոմսերի բլանկներն ուղարկում են շրջկոմներին և քաղկոմներին, նույնպես յելնելով կազմակերպության կազմից, վորոշ ավելցուկով, կախված այն պայմաններից, վորոնք պայմանավորում են անդամատոմսերի այդ բլանկների պահումը:

8. Անդամատոմսերի համար կրկին տրվող հայտերը բավարարվում են առաջուց ուղարկված անդամատոմսերի բլանկների վոչ պակաս 85% ծախսման մասին ՀամԼԿՅԵՄ ԿԿ-ին հաշվետվություններ (կցված ձևով) ներկայացնելուց հետո: Նույն կարգը սահմանվում է քաղկոմների և շրջկոմների համար համապատասխան վերադաս կոմիտեների կողմից:

9. Անդամատոմսերը լրացվում են անպայման թանաքով, ստորագրվում են կոմիտեյի քարտուղարի կողմից (ֆակսիմելեն արգելվում է) և հաստատվում են կոմիտեյի կնիքով: Այն կազմակերպությունը, վորը տալիս է տոմսը, պետք է անխափանի մատնանշելով մարզը, յերկիրը (край), հանրապետությունը:

10. Անդամատոմսերը տալու ժամանակ նրանց պատրաստման, առաքման ծախսերը հատուցանելու համար գանձվում են հետևյալ վճարները.

ա) բանվորներից, ծառայողներից, տնայնագործներից, Բ.Գ.Կ. բանակի հրամ. կազմից և բարձրագույն դպրոցի ուսանողներից, վորոնք ստանում են մինչև 60 ռուբլի աշխատավարձ, գանձել 25 կոպեկ, 60 մինչև 110 ռուբլի—50 կոպեկ, 111 ռուբլուց մինչև 175 ռուբլի— 75 կոպեկ և 176 ռուբլի և բարձր— 1 ռուբլի.

բ) Փզուսի աշակերտներից— 25 կոպեկ.



գ) գյուղացիներից—25 կոպեկ.

դ) տարրական դպրոցներից—10 կոպեկ:

Ծանոթություն 1.—Բարձրագույն դպրոցի այն ուսանողներից, վորոնք չեն ստանում թոշակ և չունեն ինքնուրույն դատում (заработок), անդամատոմսերի համար գանձել 25 կ.:

Ծանոթություն 2.—Մանկատների սաներին և այն անձանց, վորոնք ֆիզիկական աշխատանքի անընդունակ են (պենսիա ստացողներ), ազատել անդամավճարից:

Ծանոթություն 3.—Կարմիր բանակայիններին տոմսի վճարից ազատել:

11. Փչացած, գտնված անդամատոմսերը, վտարվածների, կազմակերպությունից դուրս յեկածների անդամատոմսերը ուղարկվում են շրջկոմին: Այդ դեպքում անդամատոմսի վրա արվում է համապատասխան նշում. «վտարված է», «փչացած է» և այլն: Շրջկոմն այն վոչնչացնում է կուտակման ընթացքում, կազմելով դրա համար համապատասխան արձանագրություն, արձանագրության պատճեն ուղարկվում է մարզկոմ, յերկրկոմ, ազգային հանրապետությունների ԿԿ-ին:

## ԱՆԴԱՄԱՏՈՄՍԵՐԻ ՏՐՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Դուրս գրված անդամատոմսերը մտցվում են բաշխման ցուցակների մեջ: Այդ ցուցակների մեջ գրվում են ազգանունը, անունը, անդամատոմսի համարը և գանձվում է վճարը:

Անդամատոմսի ստացման մասին կոմյերիտականը ստորագրում է ցուցակում: Այս բոլոր ստորագրերը վերադարձվում են շրջկոմ, քաղկոմ, վորտեղ և պահվում են արխիվում և վոչ մի դեպքում չեն վոչնչացվում:

Անդամատոմսերը տրվում են համարակալության կարգով:

2. Ազգանունը փոխելու դեպքում տոմսը վոչնչացված է համարվում և նրա փոխարեն ուրիշն է տրվում:

3. Անդամատոմսը կորցնելու, հափշտակվելու դեպքում նոր տոմս կարող է տրվել յերկամսյա ժամկետից հետո կոնֆլիկտային հանձնաժողովի համապատասխան վորոշման դեպքում: Գտնված տոմսերը նորը տալուց հետո համարվում են անվավեր և անհապաղ ուղարկվում են վերադաս կոմիտեներին վոչնչացնելու համար:

## ԲԼԱՆԿՆԵՐԻ ՏՈՄՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՈՒՄԸ

1. Տոմսերի բլանկները պետք է պահվեն կոմիտեյի քարտուղարի անձնական պատասխանատվությամբ, և նրանց հաշվառումը պետք է դրվի որինակելի կարգի մեջ:

2. ՀամԼԿՑԵՄ բարդկոմները, յերկրկոմները և ազգային հանրապետությունների ԿԿ հաշվառումը տանում են հատուկ գրքով: Այդ գրքի մեջ նշանակվում են տոմսերի քանակը և համարները, վոր ստացվում է ՀամԼԿՑԵՄ ԿԿ-ից (մուտք) և այն քանակը, տոմսերի համարները, վոր ուղարկվում են ստորին կազմակերպություններին (յելք): Շրջկոմները, քաղկոմները տոմսերի հաշվառումը տանում են բաշխման ցուցակներով:

Ցուցակների ձևերը միասնական են բոլոր կազմակերպությունների համար և պատրաստվում են ՀամԼԿՑԵՄ ԿԿ-ի կողմից:

3. Տոմսերի առաքումը կատարվում է գաղտնի կարգով կամ հատուկ սուրհանդակի միջոցով:

ՀԱՄԼԿՑԵՄ ԿԿ



........................................ ԼԿՑԵՄ կոմիտեյին

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՏՈՄՍԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ ՄԱՍԻՆ

193 թ. .............. մինչև 193 թ. ժամանակաշրջանի համար

Կազմակերպության անունը ..............................

1. Մնացորդ հաշվետու ժամանակաշրջանի սկզբին ------ տոմս
2. Լրացուցիչ ստացված է հաշվետու ժամանակաշրջանում տոմս
3. Տրված է .............. տոմս
4. Փչացված է .............. տոմս
5. Հաշվետու ժամանակաշրջանի վերջին որը մնացել է ------ տոմս
6. Տրված անդամատոմսերի համար ստացված է դրամական վճար

.............................. ռուբլի:

Կոմիտեյի քարտուղար՝ (Ստորագրություն)

« » .............. 193 թ.

# ՀՐԱՀԱՆԳ

## ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԴՐՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԼԿՅԵՄ ԿՈՄԻՏԵՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԲՋԻՋՆԵՐՈՒՄ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՏՈՄՍԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

1. ՀամԼԿՅԵՄ բոլոր անդամները և թեկնածուները յենթակա յեն անհատական հաշվառման:

Կոմյերիտականների անհատական հաշվառումը կատարվում է միայն բջիջներում, ձեռնարկություններին կից կոմիտեներում, շրջանային (քաղաքային) կոմիտեներում: Մարզկոմները, յերկրկոմները և ազգային հանրապետությունների ԿԿ կազմակերպության անդամների հաշվառումը տանում են շրջանային, քաղաքային և ինքնավար մարզային կոմիտեների կողմից ներկայացված վիճակագրական հաշվետվությունների հիման վրա:

Ծանոթություն 1. Այն շրջանները, վորոնք գտնվում են ինքնավար մարզերի տերիտորիայում, հաշվետվություններն ուղարկում են մարզկոմին, վերջինս ամփոփված հաշվետվությունն ուղարկում է յերկրային կոմիտեյին:

Ծանոթություն 2. Այն շրջանները, վորոնք գտնվում են ազգային հանրապետությունների ԿԿ տերիտորիայում, իրենց հաշվետվությունները ներկայացնում են ազգային հանրապետությունների ԿԿ-ին:

Ծանոթություն 3. Այն շրջանները, վորոնք գտնվում են քաղաքային կոմիտեների անմիջական ղեկավարության ներքո, իրենց հաշվետվություններն ուղարկում են քաղկոմին:



Քաղաքային կոմիտեն իր ամփոփ հաշվետվությունն ուղարկում է վերադաս կոմիտեյին:

2. Կոմյերիտականների անհատական հաշվառումը տարվում է անձնական և հաշվառման քարտերով:

Անձնական քարտերը պահվում են շրջկոմում, իսկ այնտեղ, վորտեղ այդ շրջկոմի տերիտորիայում կան կոմյերիտմիության ֆաբրիկա-գործարանային կոմիտեներ, այդ անձնական քարտերը պահվում են գործարանային կոմիտեներում:

Անձնական քարտի համարը պետք է համապատասխանի տրված կոմյերիտական անդամատոմսի համարին:

ՀամԼԿՅԵՄ անդամների անհատական հաշվառումն անցկացվում է հաշվառման քարտերով, վորոնք հանդիսանում են անձնական քարտերի պատճենները, վորոնք պահվում են շրջանային կամ գործարանային կոմիտեներում:

## ՀԱՇՎԱՌՈՒՄ ԲՋՋՈՒՄ

Կոմյերիտականների անհատական հաշվառումը բջջում տարվում է հաշվառման քարտերով:

Հաշվառման քարտը կազմում է շրջանային կոմիտեն կամ կոմյերիտմիության մեջ ընդունելու ժամանակ, կամ թե ուրիշ կազմակերպություններից գալու ժամանակ և շրջանային կոմիտեյի կողմից ուղարկվում է (քարտը) այն բջջին, վորի մեջ գտնվում է կամ կցվում է տվյալ կոմյերիտականը:

Հաշվառման քարտը հանդիսանում է կցման կամ թե տվյալ կոմյերիտականի բջջին պատկանելու փաստաթուղթ:

Ամբողջ այս հաշվառման աշխատանքը տանելու համար բջիջն ընտրում է հաշվառու ՀամԼԿՅԵՄ ավելի գրագետ անդամներից:

Հաշվառուի պարտականությունն է կազմակերպել հաշվառման քարտերի պահումը, վերջիններիս տալը կոմյերիտականներին, վորոնք դուրս են գալիս բջջից, կանոնավոր ստուգումը և այն փոփոխությունների մտցնելը, վորոնք տեղի յեն ունենում կոմյերիտականի կրթության, կուսակցականության և զբաղմունքների տեսակի մեջ:

Հաշվառուն նմանապես հսկում է կոմյերիտականի հաշվառման քարտի շրջանային կոմիտեյից ժամանակին ստացվելու վրա:

## ՀԱՇՎԱՌՈՒՄ ԿՈՄԻՏԵՆԵՐՈՒՄ

Կոմյերիտականներին հաշվառելու նյութը կոմիտեներում, վորոնք տանում են ՀամԼԿՅԵՄ անդամների անհատական հաշվառումը, ծառայում են անձնական քարտերը: Այդ անձնական քարտերը տեղավորվում են արկղներում ըստ բջիջների, իսկ բջիջների մեջ՝ այբբենական կարգով: Անձնական քարտերի հիման վրա կոմիտեները կազմում են ՀամԼԿՅԵՄ ԿԿ-ի կողմից սահմանված վիճակագրական հաշվետվությունները, ուղարկելով այն սահմանված ժամկետներին համապատասխան կոմիտեներին:

Քարտերում հնարավոր տարբերությունները վերացնելու և կազմակերպության մեջ կոմյերիտականների ճիշտ թիվը հայտնաբերելու նպատակով կոմիտեները սիստեմատիկորեն համեմատում են անձնական քարտերը հաշվառման քարտերի հետ:

## ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆՈՐ ԸՆԴՈՒՆՎԱԾՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

Կոմյերիտմիության մեջ նոր ընդունվողները (կամ թեկնածությունից անդամ փոխադրվողները) լրացնում են սահմանված ձևի անկետա:

Այդ անկետան ընդունող բջջի կողմից հաստատվելուց հետո ուղարկվում է շրջանային կոմիտե:

Շրջանային կոմիտեն կոմյերիտմիության մեջ ընդունելու ժամանակ այդ անկետայի հիման վրա կազմում է անձնական և հաշվառման քարտերը և դուրս է գրում անդամատոմսը (թեկնածվական):

Հաշվառման քարտը և անդամատոմսն ուղարկվում է բջիջ, իսկ անձնական քարտը դրվում է այն բջջի քարտատեկայի մեջ, վորի (բջջի) մեջ հաշվառվում է տվյալ կոմյերիտականը:

Նոր ընդունվածների անկետաները պահվում են առանձին մինչև մոտակա վիճհաշվետվություն կազմելը կազմակերպության աճման և հոսունության մասին, վորից հետո հանձնվում է արխիվ:



## ՎՏԱՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ՄԵԽԱՆԻԿՈՐԵՆ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾՆԵՐԻՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼԸ

Վտարումը հաստատելուց հետո վտարվածի անձնական քարտը դրվում է վտարվածների թղթապանակի մեջ և պահվում է նրա մեջ մինչև մոտակա վիճհաշվետվության ձև № 1 կազմելը:

Անձնական քարտի մեջ արձանագրվում է վտարման պատճառը, և մոտակա վիճհաշվետվությունը կազմելուց հետո քարտը արխիվ է հանձնվում:

ՀամԼԿՅԵՄ-ից դուրս յեկածների և վտարվածների անդամատոմսերը կուտակման ընթացքում այրվում են, վորի համար արձանագրություն է կազմվում և պահվում շրջկոմում:

ՀամԼԿՅԵՄ-ից վտարվածների և դուրս մնացածների հաշվառման քարտերը վերջնական ձևակերպումից հետո վոչնչացվում են:

## ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բջջից դուրս գալու դեպքում կոմյերիտականը պետք է հետը վերցնի հաշվառման քարտը և ներկայանա կոմիտեյին:

Կազմակերպության ներսում (շրջանի) կոմյերիտականի տեղափոխության դեպքում կոմիտեն հաշվառման քարտի մեջ նշում է կատարում մյուս բջջին կցելու մասին և ուղարկում է այն՝ բջջին կցելու ըստ տեղի, վորտեղ հաշվառման քարտը հանձնվում է քարտուղարին:

Կոմյերիտականի կցման հետ միաժամանակ նրա անձնական քարտը (վոր պահվում է կոմիտեյում) հանվում է այն բջջից, վորտեղ յեղել է, և հաշվառվում է այն բջջի մեջ, վորին նա կրկին կցված է:

Յեթե կոմյերիտականի տեղափոխությունը կատարվում է վոչ կազմակերպության ներսում (շրջանի), այն դեպքում կոմիտեն կոմյերիտականից առնում է հաշվառման քարտը և տալիս է անձնական քարտը, վորով և կոմյերիտականը գնում է ըստ իր ժամանման տեղի համապատասխան [illegible] վառման քարտում (կոմյերիտականից առն[illegible] հանման մասին և քարտը հանձնվում է արխի[illegible] ցած ուրիշ կազմակերպությունների մեջ):

ՀՀ Ազգային գրադարան
NL0195478

Ուրիշ կազմակերպությունից յեկած կոմյերիտականից առնվում ե անձնական քարտը և նրա հիման վրա կազմվում ե հաշվառման քարտ։ Այդ հաշվառման քարտում նշվում ե ժամանման ժամանակի մասին, և քարտը տրվում ե կոմյերիտականին բջջին հանձնելու ըստ տեղի կցվելու համար։ Իսկ անձնական քարտը դրվում ե բջջի այն քարտատեկայի մեջ, վորին կցված ե յեկողը։

Ծանոթություն 1. *Մի կազմակերպությունից մյուս կազմակերպությունը տեղափոխվելու դեպքում վոչ մի կոմյերիտական առանց անձնական քարտի չի կարող վերցվել մշտական հաշվառման։*

Ծանոթություն 2. *Բոլոր տեսակի կցումները և հեռացումները կարող են ձևակերպվել բջիջների քարտադարների միջոցով։*

Ծանոթություն 3. *Յեթե կոմյերիտականը կազմակերպությունից դուրս գալու ժամանակ հետը չի վերցրել անձնական քարտը, այն դեպքում ուրիշ կոմխոե ժամանելու դեպքում նա ներկայանում ե իր հաշվառման քարտով, և կոմխոեն նրա հիման վրա փոխադրվածի անձնական քարտը պահանջում ե այն կազմակերպությունից, վորտեղից ժամանել ե ընկերը։*

ՀԱՄԼԿՑԵՄ ԿԿ